

# ԱՄԱԳԻԱՅ

ԼՁ. ՏԱՐԻ ԹԻՒ 1968 ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 12 ՅՈՒՆԻՍԻՐ 2015  
• VOL. XXXVI, NO 1968 • LUNDI, 12 JANVIER 2015 • MONDAY, JANUARY 12, 2015



ԿԸ ՅԻՇԵՄ ԵՒ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՄ

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Հրապարակուեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով



ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,  
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲԸ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ  
ԵՊԻՍԿՈՊՈՍԱԴԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ  
ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ  
ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ ԷԶՄԻՃՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՐՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՐԱԴԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ  
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐԷՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ  
ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱԴԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼԻՍՈՅ,  
ԱՐԹԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ,  
ԿԱՐԴԱԴԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱԲԱԿԱՑ,  
ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ  
ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՈՆԵԻՑ ԵՒ  
ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱԲԱՏԱՑԵԱԼ  
ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

**«Ճանապարհք արդարոց որպէս լոյս ծագեն,  
առաջնորդեն եւ լուսաւորեն, մինչեւ  
տիւն լուսաւորեսցէ»  
(Առակ. Դ 18) :**

Հայոց Ցեղասպանության 100-ամեայ տարելիցի  
առջեւ ենք՝ մեր հոգիներում արդարության եւ ճշմար-  
տության անլույս, զօրեղ պահանջով:

2015 թուականի իւրաքանչիւր օր մեր ժողովրդի  
համար ոգեկոչման եւ խնկարկման օր է, հոգեւոր երթ  
դէպի Հայրենիքում եւ Սփիւռքում վեր յառնած նա-  
հատակաց յուշարձաններ՝ ծնրադիր խոնարհումով  
աղօթք բարձրացնելու անշիրիմ մնացած մեր անմեղ  
զոհերի հոգիների համար, ովքեր մահն ընդունեցին՝  
մերժելով հաւատուրացութիւն եւ ազգութագրութիւն:  
Յիրաւի, «Արդարների ճանապարհները նման են  
ծագող լոյսի, որն առաջնորդում եւ լուսաւորում է  
նրանց, մինչեւ որ օրը լրիւ լուսաւորի»:

1915 թուականին եւ հետագայ տարիներին օսման-  
եան թուրքիայի կողմից իրագործուեց Ցեղասպանու-  
թիւն մեր ժողովրդի նկատմամբ: Արեւմտեան Հայաս-  
տանում՝ բնօրրան մեր Հայրենիքում եւ թուրքիայի հա-  
յաշատ բնակավայրերում կազմակերպուած ջարդերին,  
սովին ու հիւանդութիւններին, որ իշխում էին բռնա-  
գաղթի ճանապարհներին, զոհ գնացին ազգիս մէկ եւ  
կէս միլիոն զաւակներ: Թալանուեց դարերով ստեղ-  
ծըւածը, արդար վաստակը մեր ժողովրդի: Խոնար-  
հընեցին ու աւերուեցին հազարաւոր մեր վանքերն  
ու եկեղեցիները, ազգային հաստատութիւնները,

Շար. էջ 3

## ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԼՐԱՏՈՒԱՄԻՋՈՑՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ

Ամանորի և Սուրբ Ծննդե-  
ան տօներու առթիւ Նա-  
խագահ Սերժ Սարգսեան  
28 Դեկտեմբերին Նախա-  
գահի նստավայրին մէջ ըն-  
դունելութեան հրավիրած է  
զանգուածային լրատուու-  
թեան միջոցներու ներկայա-  
ցուցիչներուն: Շնորհաւորե-  
լէ ետք Նոր Տարին եւ Սուրբ  
Ծնունդը ու մաղթելէ ետք,  
որ Նոր Տարին բերէ յաջո-  
ղութիւն բոլորի գործերուն  
եւ ըլլայ խաղաղ ու երջանիկ  
բոլորի համար, Նախագահը  
իր խօսքերուն մէջ բարձր  
գնահատանքով արտայայ-  
տըւած է տարուան վերջին  
ամիսներուն ստեղծուած  
ճգնաժամային կացութիւն-  
ներուն՝ հայկական ուղ-  
ղաթիւի վրայ կատարուած  
յարձակումին եւ դրամի ար-  
ժեքազրկման վիճակներուն,  
ու ըսած է թէ այդ խուճա-  
պային վիճակը «հնարաւոր  
եղաւ արագ հարթել այդ  
թուում նաև ձեր գիտա-  
կից աշխատանքի շնորհիւ:  
Շնորհակալ եմ ձեզ: Այս-  
պիսի աշխատանքով դուք  
աւելին էք անում, քան պար-  
զապէս գրագետ լրատուու-  
թիւն հաղորդելն է»: Ապա  
Նախագահը աւելցուցած է,

«Դուք ապացուցում էք,  
որ հայրենասիրութեան  
դրսևորումները մասնագի-  
տութիւն չեն ճանաչում:  
Հավատացէ՛ք, սրանով դուք  
մեծ բան էք անում մեր  
երկրի յետագայ ընթացքի  
համար, մեր որդեգրած ար-



Նախագահ Սերժ Սարգսեան եւ «Ազգ»ի խմբագիր Յակոբ  
Աւետիքեան

ժեքների, խօսքի ազատու-  
թեան ամրապնդման հա-  
մար:»

Անդրադառնալով վարկա-  
բեկիչ լրատուութեան, Նա-  
խագահը ըսած է, «...մաս-  
նաւորապէս չեմ ընդունում  
անձնական վիրաւորանք-  
ների և պիտակաւորումների  
ձեռագիրը, որ երբեմն կա-  
րելի է տեսնել մեզանում,  
...վստահ եմ, որ ժամանակն  
ամէն ինչ արդէն իսկ իր  
տեղն է դնում, և տեղե-  
կատուութիւն ստանալու  
անսահման մեծ հնարա-  
ւորութիւններ ունեցող այ-  
սօրուայ ընթերցողն ինքն է  
հետևողականօրէն անցեա-  
լում թողնում նմանօրինակ  
լրատուական բարբարո-  
սութիւնը, երևույթ, որ հենց  
անցեալին է բնորոշ»:

Խօսելով տակաւին ան-

հանգիստ արտաքին միջա-  
կայրի մէջ յառաջիկայ տար-  
ւան դիմագրաւելիք բազ-  
մաթիւ պարտաւորութիւն-  
ներու մասին, ինչպէս՝ տըն-  
տեսութեան վերելքի և ըն-  
կերային խնդիրներու լուծ-  
ման ուղղությամբ, Հայոց  
Ցեղասպանության 100-ամ-  
եակի կապակցութեամբ և  
ամենօրուայ խաղաղութիւնը  
աչալըջօրէն հսկելու մշտա-  
կան պարտաւորութեան,  
Նախագահը ըսած է, «Մենք  
միասին անելու շատ բան  
ունենք և, վստահ եմ, որ  
բաց, թափանցիկ և արդիւ-  
նաւետ ենք անելու: Համոզ-  
ւած եմ, որ 2015 թուականը  
լինելու է համագործակ-  
ցութեան և առաջընթացի  
տարի», եզրակացուցած է  
Նախագահ Սարգսեան:

## ԴԵՍԱՅԱՆ ԵԳԱՆԵԱՆ ԽԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵԳԱՆ ԳԱՆԱՏԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԵՆ

Երկուշաբթի, 22 Դեկտեմբերին Գանատայի արտաքին  
գործոց նախարար Շոն Պէյրոտ ընդունեց Գանատայի  
մօտ Հայաստանի դեսպան Արմէն Եգանեանը:

Հանդիպման ծիրէն ներս անդրադարձ կատարուեցաւ  
տարուան ընթացքին երկկողմ յարաբերութիւններու  
զարգացման ուղղուած աշխատանքներուն:

Շեշտուեցաւ փոխայցելութիւններու կարելորութիւնը՝  
ընդգծելով Գանատայի աշխատանքի եւ ընկերային  
զարգացման ու բազմամշակութայնութեան նախարար  
Քէյսըն Զէննիի, ապա գանատական խորհրդարանական  
պատուիրակութիւններու՝ Հայաստան այցերը՝ ինչպէս  
նաեւ ՀՀ խորհրդարանական եւ պաշտպանութեան  
նախարարութեան պատուիրակութիւններու՝ Գանատա  
այցելութիւնները:

Երկու կողմերը բարձր գնահատեցին համագործակ-  
ցութիւնը միջազգային կազմակերպութիւններու, մաս-  
նաւորաբար Ֆրանքֆոնի միջազգային կազմակեր-  
պութեան ծիրէն ներս:

Զննարկուեցան 2015թ. հայ-գանատական փոխ գործակցութեան վերաբերող հարցեր:



# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Եւ ահա հասաւ Ցեղասպանութեան 100-ամեակը ...:  
1965-ին, Մեծ Եղեռնի Յիսնամեակը յատկապէս Խորհրդային Ռայաստանի համար եղաւ անկիւնադարձային նշանակութիւն ունեցող հանգրուան մը, երբ Ռայաստանի Ժողովուրդին մէջ տեղի ունեցաւ ազգային գիտակցութեան զարթօնք մը, արթնցաւ արդար սակայն զուսպ ընդվզում մը, եւ պետական շրջանակներու լուռ հաւանութեամբ, տեղի ունեցան խաղաղ ցոյցեր, կառուցուեցաւ Ծիծեռնակաբերդի յուշարձանը (1967), Սարտարապատի համալիրը (1968), Վարդան Մամիկոնեանի արձանը (1975), իսկ աւելի կանուխ կառուցուած էր Սասունցի Դաւիթի արձանը (1960):

Սփիւռքի մէջ, իւրաքանչիւր տարի Ապրիլ 24-ի սգահանդէսները վերածուեցան յուշահանդէսներու եւ 1973-1987 ԱՍԱԼԱ-ի զինեալ յարձակումները, որոնց զոհ զացին մօտ 50 թուրք հիւպատոսներ կամ դիւանագիտական բարձաստիճան գործակալներ, մեր Դատը քաղաքականացուց եւ անոր տուաւ համաշխարհային ճանաչման թափ մը, որ կը շարունակուի մինչեւ այսօր: Իսկ Թուրքիան կը խորհեր որ Ցեղասպանութենէն քանի մը տասնամեակ ետք աշխարհով մէկ ցրուած վերապրող հայերու խլեակները պիտի ձուլուէին եւ միանգամընդմիջտ պիտի լուծուէր Հայկական Հարցը ...:

Հայոց Ցեղասպանութեան ողիսականի ճամբուն երկրորդ եւ աւելի հիմնական հանգրուանը հանդիսացաւ Ռայաստանի անկախացումը եւ Արցախի հերոսական ազատագրումը: Այլեւս ունեցանք պետութիւն մը որ պէտք էր հաշուի առնուէր որեւէ մէկու կողմէ որեւէ հայկական հարցով. պատմութեան անցած եւ միայն հպարտանքի արժանի անցեալով չէ որ պիտի ճանչցուէինք, այլ՝ այսօր, մեր անկախ պետութեամբ, հերոսական Արցախով եւ նախանձելի Սփիւռքով մեր ներկայութիւնը պիտի կարողանայինք պարտադրել: Թրքական բիրտ ուժի սնանկ քաղաքականութիւնը՝ պոլսահայութիւնը պատանդ առնելով ամբողջ հայութեան վրայ ճշշում բանեցնելու փորձը ոչ միայն ձախողեցաւ, այլ յաջա Եւրոպայի եւ ամբողջ աշխարհի, աւելի վարկաբեկեց Թուրքիոյ հեղինակութիւնը: Եւ ահա քանի մը տարիներէ ի վեր փոքր քայլերով Թուրքիա սկսած է քաղաքակրթութեան նուազագոյն պարտաւորութիւններով յարգելու փոքրամասնութիւններու տարրական իրաւունքները: Խօսքի եւ գիրի ազատութեան նոյնիսկ ժլատ թոյլտուութիւն մը պատճառ դարձաւ որ Թուրք մտաւորականութեան եւ հանրութեան խոշոր մաս մը իրազեկ դառնար պատմական իրողութիւններու եւ անոնցմէ շատեր բացայայտօրէն արտայայտուելու հայութեան դէմ իրենց նախորդներուն գործադրած ցեղասպանութեան մասին ու պատրաստակամութիւն՝ ցաւ եւ ներողամտութիւն յայտնելու հայութեան: Նոյնիսկ Թուրքիոյ նախագահը ցաւակցութիւն յայտնեց «1915-ի հարցերու կապակցութեամբ» անմեղ զոհերու զաւակներուն եւ թոռներուն, յուսալով որ պիտի ողորձէ հայ զանգուածները ու շրջանցէ ներողութիւն խնդրելու եւ հատուցում կատարելու տաղտուկէն: Թեւեւ ծայրայեղականներ չվարանեցան դիմելու վայրագ արարքներու եւ սպանութիւններու. անոնք պարզապէս իրենց վարկը աւելի խոր տիղմի մէջ թաղեցին: Այդ բոլոր յուսահատական եւ կիսատ-պրատ արարքները նպաստեցին միայն Ցեղասպանութեան համաշխարհային աւելի լայն ճանաչողութեան:

Ու հասանք երրորդ հանգրուանին՝ Ցեղասպանութեան 100-ամեակին: Սուգէ, յիշատակումէ ու ճանա-

չումէ ետք՝ հասանք պահանջատիրութեան, ամենադժուար հանգրուանին: Այսօր, նոյնիսկ ամենախտելիստ, ամենալայնամիտ Թուրք մտաւորականը որ անվարան կ'ընդունի պատմական իրականութիւնները, կը դատապարտէ ցեղասպանական արարքները ու պատրաստ է նոյնիսկ ի հաշիւ անցեալի ոճրագործներու՝ ներողամտութիւն խնդրելու, կը պապանծի երբ հարցը կուգայ պահանջատիրութեան, մանաւանդ հողային պահանջատիրութեան. հո'դ է որ կը վերջանայ երկխօսութիւնը, կը դադրի «շրթունքի ծառայութիւն»ը (lip service):

Այս հանգրուանի մեր երկու հիմնական երաշխիքներն են՝ Ռայաստանը եւ Սփիւռքը: Ռայաստանը, այլ երկիրներու հետ իր զարգացուցած տնտեսական, մասնագիտական, ուժանիւթերու, փոխադրամիջոցներու եւ այլ բնագաւառներու յարաբերութիւնները որպէս լծակ ծառայացնելով կրնայ արգելակել թրքական ճշշումներ եւ առաջ քշել իր պահանջները: Նկատի ունենալով որ մեր Դատը այնքան բեւեռացած բնոյթ մը կը կրէ, որ ըլլա՛յ դատական թէ քաղաքական միջնորդութեամբ, հաւանական չէ որ մօտակայ ապագային բարուք լուծումի մը հանգի: Ուրեմն կարելոր է որ այս միջանկեալ ժամանակաշրջանը օգտագործուի զօրացնելով թէ՛ Ռայաստանը եւ թէ՛ Սփիւռքը: Անկասկած, Ռայաստանը ու մանաւանդ մայրաքաղաք Երեւանը յատկապէս վերջին տասնամեակին արձանագրած է զգալի զարգացում, որ ակնյայտ է որեւէ այցելուի: Բազմաթիւ համաշխարհային չափանիշներով կատարած հարցախոյզեր եւ ուսումնասիրութիւններ երկիրներու բազմակողմանի տուեալներու վրայ հիմնելով, Ռայաստանը ընդհանրապէս կը դասեն պատւաբեր մակարդակի արդիւնքներով: Սակայն տակաւին աղքատը կը մնայ շատ աղքատ ու հարուստը աւելի կը հարստանայ, եւ արիւնահոսումը՝ արտագաղթը ու մանաւանդ մտքի արտահոսքը կը շարունակուի: Այս յօդուածի սահմաններէն դուրս է այս հարցի վիճարկումը: Բաւականանա՞նք ըսելով թէ Ռայաստանի Վարչապետ Յովիկ Աբրահամեան իր տարեվերջի հաշուեյարդարի ճառախօսութեան մէջ ընդունած է թէ առկայ են բազմաթիւ դժուարութիւններ, որոնց լուծումը կայ, բայց ժամանակի կը կարօտի: Արդե՞օք ակնարկութիւնը օլիկարքներու կուտակած գումարներու մասին է, որ հարկ է աշխատցնել մարդոյժի գործ եւ եկամուտ ապահովելու համար, քան թէ պահուած գումարները աւելի ուռճացնելու:

Գալով Սփիւռքի դերին, որպէս Արեւմտահայաստանի գլխաւոր ժառանգորդը, Սփիւռքը ունի կարողականութիւնը, որ Ռայաստանի գործակցութեամբ, որպէս աշխարհի բազմաթիւ մեծ պետութիւններու վստահելի եւ օգտակար տարրեր, Երբեմն պետական շրջանակներու հետ սեփական շփումներով կամ հայկական քաղաքական, եկեղեցական ու համայնքային յարաբերութիւններով իրենց արդար պահանջքի ծայրը լսելի դարձնեն: Ամենակարեւորը սակայն Սփիւռքի կազմակերպումն է, միաւորումն է, որպէս մէկ վարչամեքենայ եւ մէկ ձայն: Մէկ դարու հասունութիւնը բաւարար պէտք է ըլլայ այս դժուարին սակայն կենսական կազմակերպութիւնը յաջողութեամբ իրագործելու համար: Եթէ հայ անհատը ունի ճկունութիւնն ու ուշիմութիւնը աշխարհի ամենաբարձր դիրքերու հասնելու, պէտք է կարենայ նաեւ յաջող կերպով կենսագործելու Սփիւռքի կազմակերպութիւնը:

Յ.Ա.

## Էթիէն Մահճուպեան՝ Հարիւրամեակի մասին

«Աժանս Ֆրանս Փրետ»ի տրուած հարցազրոյցի մը ընթացքին, Թուրքիոյ վարչապետ Ահմետ Տավուտօղլուի աւագ խորհրդական՝ Էթիէն Մահճուպեան յայտնած է թէ պէտք չէ ակնկալել որ 1915-ի ընթացքին խոշոր իրագործումներ կրնան յառաջանալ Ռայաստան-Թուրքիա յարաբերութիւններու մէջ: Ան ըսած է թէ այս տարուան ընթացքին կարելի է յուսալ նախապատրաստական զարգացումներ, յարաբերութիւններու հաստատում Ռայաստանի

եւ Ռայ Սփիւռքի հետ, սակայն հիմնական ու գործնական քաղաքական քայլերը կը նախատեսուին յառաջիկայ տարիներուն: Ըստ Մահճուպեանի, աւելի ուշ հետապնդուած գործընթացքները աւելի արդիւնաբեր պիտի ըլլան:

Մահճուպեան նաեւ դրական նկատեց ռուս-թրքական մերձեցումները եւ յոյս յայտնեց թէ Մոսկուա կրնայ դրական դեր կատարել հայ-թրքական յարաբերութիւններու բնականոնացման մէջ:



### ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՈՒԼԻ ՃԵՇՈՒՄՆԵՐԸ ԿԸ ԲԱԶՄԱՆԱՆ ԻԼՅԱՍ ԱԼԻԷԻՒ ՎՐԱՅ

Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի մարդկային իրաւունքներու ոտնակոխման մասին միջազգային մամուլի սաստիկ քննադատութիւններուն միացաւ «The Jerusalem Post» հեղինակաւոր թերթը, որ վերջերս ցաւալի նկատեց այս դարուն, նման բռնատիրական կառավարութեան մը գոյութիւնը, ակնարկելով գլխաւորաբար լրագրող Հատիճէ Իսմայիլովայի ձերբակալումին ու բանտարկութեան:

Իսրայէլ Ատրպէյճանի հետ միշտ ունեցած է սերտ յարաբերութիւններ եւ զգուշացած է քննադատել անոր մարդկային իրաւունքներու բռնաբարման ընթացքը, սակայն վերջի շրջանին Ատրպէյճան փոխած է իր արեւմտամետ քաղաքականութիւնը եւ թեքած է դէպի Ռուսաստան: Նման յօդուածով մը հանդէս եկած է նաեւ Իսրայէլի «Հաարեց» թերթը:



Շաբաթաթերթ

# ABAKA

Hebdomadaire Arménien  
Armenian Weekly ISSN 0382-9251

Publié par /Published by  
Le Centre de Publication Tékeyan  
825 rue Manoogian, Saint-Laurent,  
Québec H4N 1Z5

Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162  
e-mail: abaka@bellnet.ca  
www.tekeyanmontreal.ca

Պատասխանատու խմբագիր՝  
ԱԼԵՏԻՍ ՊԱԳԱԼԵԱՆ

Ծանուցումներու,  
նուիրատուութիւններու եւ  
գրասենեակի պատասխանատու՝  
ՍԱԼԻՒ ՄԱՐԿՈՍԵԱՆ

Թորոնթոյի պատասխանատու՝  
ՄԱՍԼԸ Բ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Canada  
2nd Class \$80 (QC & ON)  
1ère classe/first class \$90  
U.S.A. 1st class (US)\$90  
Autres pays/Other countries:  
1st class (US)\$120  
Per issue \$1.75

Dépôt légal: Bibliothèque du Québec

PM40015549R10945

TPS/GST — R119209294 • TVQ/PST #1006268699

“We acknowledge the financial support of the Government of Canada through the Canada Periodical Fund (CPF) for our publishing activities.”





# Նշելի Համերգ

30 Նոյեմբեր 2014 թուականին Պոլսահայ Մշակութային Միության «Արամ Խաչատուրեան» համերգասրահին մեջ 2014-2015 տարեշրջանի համերգաշարներուն 2-րդ տեղի ունեցաւ դաշնակահարուհի Սօֆիա Մելիքեան եւ ջութակահար Սամի Մերտինեան արուեստագետ զոյգին յաջող ելոյթով: Այս մէկը երկրորդն է, որ հաճոյքն ու վայելքը կ'ունենանք ունկնդրելու Նոյն սրահին մեջ, մեծ թիւով երաժշտասէր համակիրներու ներկայութեամբ:

Համերգը սկսաւ G. Tartini ի բազմաթիւ – sonateներէն մին - «Didone Abbandonata» ով:

«Didone Abbandonata» և «Baroque» շրջանի Opéra (նուագախաղ) մը ըլլալով ներշնչումներ տուած է շատ մը յօրինողներու:

Աղերսանքներով լի այս sonateը շատ լաւ մեկնաբանուեցաւ:

Յիշենք թէ G. Tartini ունի շատ աւելի ծանօթ sonate մը «Grille du Diable» (Սադայելի Դայալը) կոչւած:

Tartini իր հիմնած վարժարանին մեջ հասցուցած է մեծ թիւով ջութակահարներ: Ինք հաստացնելով ջութակին ծայնային թելերը եւ երկարելով աղեղը (archet) աւելի կակուղ հնչականութիւն մը ապահոված է այս նուագարանին:

Յաջորդիւ ունկնդրեցինք W. A. Mozart ի թիւ 18 K. 301 sonateը



ներդաշնակ նուագով ու Mozartեան կատարեալ մեկնաբանութեամբ:

Աւելի վերջ ունկնդիրներուն առջեւ բացուեցաւ Հայ տոհմիկ երաժշտական աշխարհէն դուռ մը՝ ուրկէ ներս մտաւ անմահ Կոմիտաս Վարդապետը Իր «Ծիրանի ծառ» ով եւ Է. Պաղտասարեանի քնարական բնոյթով երկը «Nocturne» ով:

Չութակէն փոխանցուող զգայուն մեղեդիները կ'ամբողջանային դաշնակին կատարեալ ու զգայնութեամբ լի ընկերակցութեամբ:

Առաջին մասը վերջացաւ ծանօթ Արժանթինեան յօրինող A. Piazzolla ի իր պարզութեան մեջ սրտայոյզ եւ Նոյնքա՛ն դժուարին կտորով café 1930 (Թանկօյի մը պատմութենէ) բարձր մեկնաբանութեամբ:

Խնամեալ յայտագրին երկրորդ



մասը սկսաւ մեծ յօրինող Johannes Brahms ի թիւ 1 ջութակ եւ դաշնակի sonate ով, որը կիրարկուեցաւ հեղինակին ներշնչումներու գծով՝ մերթ՝ զգայուն, մերթ վառ երեւակայութեամբ:

Sonate ին երեք բաժիններն ալ գտան իրենց համապատասխան պոռթկումի եւ խոհականութեան ելեւեջները, շեշտերու եւ ուժգնութեան թափերու տեղին գործածութիւնով:

Մեր կարծիքով նախընտրելի պիտի ըլլար եթէ զոյգ արուեստագետներու կողմէ նկատի առնուած ըլլար նուագարաններու հնչական ուժգնութիւնները որպէսզի ջութակին առինքնող նուագը աւելի ցայտուն մնար:

Այս գեղեցիկ համերգը աւարտին

հասաւ ֆրանսացի մեծ յօրինող Camille Saint – Saens ի խիստ ծանօթ «Introduction and Rondo Capriccioso»-ով:

Գեղարուեստական բարձր կատարողութեամբ ներկայացուցին զոյգ արժեքաւոր երիտասարդ արուեստագետները այս կտորն ալ, խլելով արդարացի գնահատական երկարատեւ ու յոտնկայս ծափահարութիւններ:

Ընդառաջելով ունկնդիրներու փափաքին իբր Bis A. Piazzolla ի – Oblivion–ը ) (մոռացում) Նոյնքան յաջողութեամբ եւ զգայնութեամբ:

Ապա՝ «Հայ Մշակոյթի Բարեկամներու Յանձնախումբի անունով ատենապետուհի Տիկ. Գաթիա Սէթեան զոյգ արուեստագետներուն նուիրեց գեղեցիկ ծաղկեփուսքեր:

Այս յաջող նուագահանդէսը հասաւ իր աւարտին սուրճի սպասարկութեան ճոխ սեղանով ուր ներկաները առիթը ունեցան իրենց գնահատական զգացումները արտայայտելու արուեստագետներուն եւ իրենց մաղթելու Նորանոր յաջողութիւններ:

Այս առթիւ կ'ուզենք մեր շնորհակալութիւնները օրուան մեկեւասներու՝ Տիկ. Տիանա Հաճեթեանի ու Տէր եւ Տիկ. Ալէքս Գունթերեանի նաեւ անցեալի բոլո՛ր մեկեւասներուն որոնց օժանդակութիւնները կու տան մեզի նման ելոյթներու կազմակերպութեան եռանդը:

**ԱՐԱՅ ԷԼԱԿԵՕԶ**

**30 Նոյեմբեր 2014**

## Ամենայն Հայոց՝...

**Շար. էջ 1-էն**

դպրոցները, ոչնչացուեցին եւ կորստեան մատնուեցին մեր հոգեւոր ու մշակութային արժեքները: Հայաթափուեց Արեւմտեան Հայաստանը, որտեղ մեր ժողովուրդը հազարամեակներ՝ Նոյեան դարից ի վեր, ապրել, արարել եւ իր պատմութիւնն ու մշակոյթն է կերտել:

Մէկ դար առաջ, երբ հայրենագրկուած հայութեան բեկորները սփռուում էին ողջ աշխարհով, երբ Արեւելեան Հայաստանը կենաց եւ մահու գոյամարտ էր մղում թուրքական զաւթիչների դէմ, դժուար էր հաւատալ հայ ժողովրդի ապագային: Բայց այն ճառագեց: Մեր ժողովուրդը Տիրոջ շնորհով յառնեց մահուանից: Հայրենիքի փրկուած հողակտորի վրայ վերականգնեց պետականութիւնը, աւերակներից ու խլեակներից վերակերտեց հայրենի երկիրը, դարձրեց գիտութեան, կրթութեան, մշակոյթի, «լոյսի եւ յոյսի Հայրենիք»: Տարագիր հայութիւնը տարբեր երկրներում իր տունը կառուցեց, հայրենի ծուխը ծխեցրեց, ապրեցրեց ու բարձրացրեց իր հոգեւոր ու ազգային կեանքը: Որտեղ էլ ապրեցին մեր ժողովրդի զաւակները, հասան յաջողութիւնների, արժանացան յարգանքի, վստահութեան, ճանաչուեցին բարեխիղճ աշխատանքով, գիտութեանը, արուեստին, հասարակութեան բարօրութեանը բերած աւանդով: Այսպիսին է վերջին հարիւրամեակի պատմութիւնը մեր ժողովրդի՝ պատմութիւն մաքառումի եւ վերածննդի: Այսօր, հակառակ բոլոր դժուարութիւնների՝ մեր ժողովուրդը ամրապնդում է իր անկախ պետականութիւնը, կերտում իր ազատ Նոր կեանքը եւ ազգային վերագարթօնքի յոյսերով, լաւատեսութեամբ ու վստահութեամբ նայում գալիքին:

Փառք Զեզ, բիւր փառք Զեզ, Տէր, «Զո սպառազինութեամբ պաշտպանեցիր մեզ» (Սաղ. Ե 13): Զո յոյսով, Տէր, մեր ժողովուրդը պայծառացաւ ու զօրացաւ: Զո լոյսով փայլեց մեր հոգու հանճարը, Զո զօրութեամբ ծնունդ առան մեր յաղթանակները: Ստեղծեցինք, երբ մեր ստեղծածը աւերեցին, ապրեցինք, երբ ուզեցին կորստեան մատնել մեզ: Դու, Տէր Աստուած մեր, կամեցար, որ ապրի ու բարձրանայ եղեմնագործ ծրագրով մահուան դատապարտուած մեր ժողովուրդը եւ մարդկութեան խղճի եւ միջազգային իրաւունքի առջեւ

բարձրացնի ու պաշտպանի իր արդար դատը՝ ընդդէմ պիղատոսեան անտարբերութեան եւ Թուրքիոյ ոճրագործ ժխտողականութեան:

Արդարութեան համար՝ միկնէ մեր դատի յաղթանակ, միասնաբար՝ Եկեղեցի, Ազգ եւ Պետութիւն, անսահանջ պիտի շարունակենք մեր պայքարը: Արդարութիւն է պահանջում մեր անմեղ զոհերի արիւնը, մեր ժողովրդի կրած տառապանքը, արդարութիւն են պահանջում մեր աւերակուած սրբութիւնները, մեր ժողովրդի ոտնահարուած իրաւունքները, նաեւ՝ կեղծուող եւ խեղաթիրուող պատմութիւնը մեր ժողովրդի: Ցեղասպանութիւն վերապրած մեր ժողովուրդը հաւատացել եւ հաւատում է, որ տասնեակ երկրների, պետական, հասարակական կազմակերպութիւնների ու անհատների կողքին, ովքեր ճանաչել են Հայոց Ցեղասպանութիւնը, պիտի կանգնեն Նորերը, համոզումով, որ արդարութեան հաստատումը պայմանն ու երաշխիքն է թշնամանքից եւ բռնութիւնից զերծ խաղաղ աշխարհի:

Մէկ եւ կէս միլիոն մեր նահատակների յիշատակի առջեւ Մենք երախտագիտութեան Մեր խօսքն ենք վերստին ուղղում այն պետութիւններին, կազմակերպութիւններին եւ անձանց, ովքեր ճանաչել եւ դատապարտել են Հայոց Ցեղասպանութիւնը: Երախտագիտութիւն ենք յայտնում մեր ժողովրդի զաւակներին եղբայրաբար ընդունած երկրներին ու նրանց բարեսէր ժողովուրդներին: Մարդկութեան պատմութեան լուսաւոր էջեր են արդարութեան եւ մարդասիրութեան այսօրինակ դրսեւորումները, որ սերունդներից միշտ պիտի յիշուեն եւ միշտ գնահատուեն ու նպաստեն աշխարհի խաղաղ, անվտանգ, համերաշխ կեանքին:

Հայոց Հայրապետիս համար հոգեւոր մխիթարութիւն է ի լուր մեր ժողովրդեան ծանուցել, որ 2015 թ. ապրիլի 23-ին մեր Սուրբ Եկեղեցին՝ յընթացս սրբազան պատարագի, յատուկ արարողակարգով սրբերի շարքում է դասելու «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» նահատակութեան պսակն ընդունած իր զաւակներին՝ Ցեղասպանութեան նահատակ սրբերի յիշատակի օր հռչակելով ապրիլի 24-ը:

Շնորհընկալ ժողովուրդ հայոց, ա՛զգ նահատակ, ա՛զգ յարուցեալ. խորիստ ապրիր, վստահ քայլիր, հայեացքդ տապանակիր Արարատին՝ աներկմիտ սրտով մեծ պահիր յոյսդ: Զեզ է ուղղուած մեր Տիրոջ խրախոյսն ու պատգամը.

«Թէեւ քիչ զօրութիւն ունես, բայց պահեցիր իմ խօսքերը եւ չուրացար իմ անունը: ...պահիր ինչ որ ունես, որպէսզի ոչ ոք չառնի քո պսակը» (Յայտն. Գ 8-11): Արդ, պահպանենք մեր ընթացքը Աստուծոյ առաջ արդար ու ճշմարիտ, հաւատքի հաստատուն ուղիներում, որ ծագող այգաբացի պէս ցրում է խաւարը եւ պարզում յոյսի հորիզոնները: Աստուծոյ հետ է մեր ճանապարհը, եւ հաւատքի կեանքը՝ մեր յաղթութիւնը: 100-րդ տարելիցը արդիւնաւորեւք մեր ժողովրդի մեկդարեայ մաքառումի եւ վերածննդի ուղին արժեւորելով, որպէսզի մեր զաւակները ճանաչելով իրենց պապերի եւ հայրերի ապրելու եւ ստեղծելու հերոսական կամքը, յանուն ազգի եւ Հայրենիքի ստանձնած յանձնառութիւնները՝ կերտեն Նոր պայծառ օրը հայրենի մեր երկրի ու աշխարհասփիւռ ժողովրդի: Մեր նահատակների յիշատակի ոգեկոչումը դարձնենք ուժ եւ զօրութիւն հոգեւոր, ազգային, հայրենական մեր կեանքին եւ Աստուծոյ ու մարդկանց առաջ արդար ընթացքով լուսաւորենք մեր ճանապարհը դէպի մեր իրաւունքների, մեր Նուիրական իղծերի իրականացման հանգրուան:

Քրիստոսակառոյց Նուիրական հոգեւոր կենտրոնում ազգիս, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ աղօթում ենք առ Աստուած՝ հայցելով խաղաղութիւն, ապահովութիւն եւ բարօրութիւն մեր Հայրենիքին, սիրեցեալ մեր ժողովրդին ի սփիւռս աշխարհի եւ անմայրամուտ լոյս ու հանգստութիւն՝ Ցեղասպանութեան մեր անմեղ նահատակների հոգիներին: Թող մարդկութեան կեանքում թագաւորեն սերն ու եղբայրութիւնը, արդարութիւնն ու ճշմարտութիւնը, եւ արդարների ճանապարհները որպէս լոյս ծագեն, առաջնորդեն ու լուսաւորեն, միկնէ լուսաւորուի Նոր օրը խաղաղ ու երջանիկ աշխարհի:

Շնորհ, սեր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

**Օրինութեամբ՝**

**ԳԱՐԵԳԻՆ Բ**

**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

**Տուաւ Կոնդակս ի 28-ն Դեկտեմբերի յամի Տեառն 2014 և ի թուին հայոց ՌԼԿԳ ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի ընդ համարաւ 886**

# Թշնամին դարձեալ փորձած է սահմանը խախտել

## Արցախեան բանակէն չոհուած է երկու նահատակ

Հայրենի լրատուական աղբիւրներ կը հաղորդեն, որ ատրպէյճանեան ուժերը 3 Յունուարի առաւօտեան կանուխ ժամերուն երկու շրջաններու մէջ փորձած են դէպի հայկական շրջանները ներթափանցել: Նշենք, որ ներթափանցման փորձը կատարուած է արեւելեան եւ հարաւային սահմանային շրջաններուն մէջ: Սադրանքին հետեւանքով հայկական կողմը տուած է երկու զոհ եւ մէկ վիրաւոր: Կը հաղորդուի նաեւ, որ ատրպէյճանեան կողմը եւս կրած է վնասներ եւ հեռացած այդ շրջաններէն:



Աւելի ուշ հաղորդուեցաւ, որ հայկական բանակի երկու նահատակները կը կոչուին՝ Վարդան Մկրտչեան եւ Սամուէլ Գրիգորեան իսկ վիրաւորը Վոլոտիա Յարութիւնեան անունով:

## Մոսկուայի մէջ յայտարարուեցաւ Հայաստանի անդամակցութիւնը ԵՏՄ-ին

Դեկտեմբեր 23ին, Մոսկուայի մէջ գումարուած Եւրասիական Տնտեսական Միութեան (ԵՏՄ)գերագոյն խորհուրդի նիստին, որուն ներկայ գտնուած է նաեւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան, պաշտօնապէս յայտարարուեցաւ թէ 2015 Յունուար 2էն սկսեալ կը սկսի այս կառոյցին՝ Հայաստանի անդամակցութիւնը:

Ռուսաստանի նախագահ Փութին այս առթիւ յայտնած է այն համոզումը, թէ ԵՏՄ-ին անդամակցող երկիրներուն առջեւ կը բանայ ընկերատնտեսական զարգացման լայն հորիզոններ:

Մոսկուայի մէջ, Ս. Սարգսեան մասնակցած է նաեւ ՀԱՊԿ-ի (Հաւաքական Ապահովութեան

Պայմանագրի Կազմակերպութիւն - OTSC) խորհուրդի նիստին: Հայաստանի նախագահը իր պաշտօնակիցներուն զեկուցած է Հարաւային Կովկասի մէջ տիրող կա-

ցութեան, յատկապէս՝ Հայաստան-Ազերպայճան սահմանագիծին վրայ եւ շփման գօտիին մէջ տարւոյն սկիզբէն ի վեր արձանագրուած դէպքերուն եւ վերջին միջադէպերուն մասին: Հայաստանի նախագահը իր ամբողջական զօրակցութիւնը յայտնած է հասարակաց օդուժի մը ստեղծումի ծրագրին:

Միւս կողմէ, Հայաստանի Տնտեսութեան փոխնախարար Գարեգին Մելքոնեան կը յայտարարէր, որ Հայաստան եւ Եւրոպական Միութիւն բանակցութիւններ կը վարեն նոր համաձայնագրի մը շուրջ, որ կը բովանդակէ քաղաքական եւ տնտեսական բազմաթիւ պայմաններ: Հայաստան մօտ օրէն կը ստորագրէ սոյն համաձայնագիրը: Գ. Մելքոնեան կը հաւաստիացնէ թէ այս համաձայնագիրը պիտի չխաչաձեւէ Եւրասիական Տնտեսական Միութեան պայմանները:

## Պատմութեան թուրք դասախօսը ուսանողներէն պահանջած է Հայոց Ցեղասպանութիւնը ժխտող աշխատանք

Թուրքիոյ “Սեպտեմբեր 9” համալսարանի դասախօս Թիւրքան Պաշիդիթը ուսանողներէն պահանջած է Հայոց ցեղասպանութիւնը ժխտող աշխատութիւններով ներկայաւելքներէն:

Ըստ News.am-ի՝ թրքական Radi-kal-ը կը փեխանցէ, որ “Սեպտեմբեր 9” համալսարանի պատմութեան դասախօս Թիւրքան Պաշիդիթի՝ ուսանողներուն տուած քննական յանձնարարութիւնը մեծ արձագանգ գտած է ընկերային կայքերուն մէջ: Թուրք դասախօսը պահանջած էր, որ ուսանողները քննութեան մտնեն Թուրքիոյ կողմէ Հայոց Ցեղասպանութիւնը հերքող փաստաթուղթերու հիման վրայ կատարուած աշխատանքներով:

Ուսանողները այս յայտարարութիւնը լուսանկարած եւ տարածած են ընկերային կայքերու մէջ, որմէ ետք բազմաթիւ օգտատէրեր աղմուկ բարձրացուցած են եւ իրենց բողոքը յայտնած՝ երեւոյթին նկատմամբ: Օգտատէրերուն միջեւ քննարկումներէն մէկուն ժամանակ թուրք փրոֆեսորին հարցուցած են, եթէ ուսանողներէն մէկը քննութեան ներկայանայ Հայոց Ցեղասպանութիւնը հաստատող աշխատանքով, այդ պարագային ան ի՞նչ պիտի ընէ:

Թիւրքան Պաշիդիթը արդարացած է՝ պնդելով, թէ ինք ակադեմիական յանձնարարութիւն տուած է:



# Դարձեալ Հալէպի տարբեր շրջաններ հրթիռակոծման ենթարկուեցան



Ամանորի Սեմին՝ Երեքշաբթի 30 Դեկտեմբեր 2014-ին, զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն կողմէ հրթիռակոծման ենթարկուեցան Հալէպի զանազան շրջանները, որոնց մէջ նաեւ հայաիոծ թաղամասեր՝ Սուլէյմանիէն ու Նոր գիւղը: Սուլէյմանիէի մէջ ինկած հրթիռի մը պայթումին հետեւանքով վիրաւորուեցան մէկէ աւելի քաղաքացիներ, որոնց մէջ նաեւ հայորդիներ, լուրջ վնասներ կրեցին շրջանի աշխատավայրերն ու բնակարանները:

Յիշենք նաեւ, որ պետական աղբիւրներ հաստատեցին, թէ ելեկտրականութիւնն ու ջուրը աստիճանաբար սկսած է միանալ շուրջ 5 օրուայ մնայուն անջատումէն ետք:

## Դամասկոսի Հայոց Թեմի Առաջնորդի հանդիպումը նախագահ Ասատի հետ

Սուրիական «ՍԱՆԱ» գործակալութեան համաձայն, Դեկտեմբեր 21ին, Կրօնի նախարարութեան տարեկան համաժողովէն ետք, Սուրիոյ նախագահ Պաշար Ասատ ընդունած է մահմետական եւ քրիստոնէայ կրօնական առաջնորդները: Հանդիպման ընթացքին, Դամասկոսի Հայոց թեմի առաջնորդ Արմաշ Եպս. Նալպանտեան անդրադարձած է Հայոց Ցեղասպանութեան 100ամեակին եւ կարեւոր համարած է Սուրիոյ արաբ ժողովուրդին մարդասէր եւ փրկարար դերը Մեծ Եղեռնի տարիներուն:

Նախագահ Ասատ ալ նշած է, որ նման հանդիպումները մեծ նշանակութիւն ունին ազգային եւ պատմական մակարդակով եւ ցոյց կու տան սուրիական համայնքի ուժն ու

միասնականութիւնը իրենց կրօնական եւ ցեղային հարստութեամբ, ինչ որ հայրենիքի տոկոսնութեան հիմքերէն մէկն է դաժան պատերազմին ընթացքին:

Ասատ նաեւ նշած է, թէ պէտք է ժողովուրդի ուշադրութեան կեդրոնին պահուիլ տարբերութիւնները ծայրայեղութեան եւ իրական խլաւին միջեւ, որ հիմնուած է բարոյականութեան, սիրոյ, գործակցութեան եւ հանդուրժողականութեան վրայ:

Մասնակիցները իրենց կարգին հաւաստած են, որ Սուրիան պիտի մնայ մշակութային բազմազանութեան, ազգի միասնականութեան եւ ահաբեկչութեան դէմ պայքարի վառ օրինակ, որ կը մերժէ օտար ծայրայեղական գաղափարները:

## 2015-ին կ’աւելնայ համաշխարհային դրամատան օժանդակութիւնը Հայաստանին

Համաշխարհային դրամատունը ներկայացուցած է ընթացիկ տարուան մէջ Հայաստանին տրամադրած դրամական օժանդակութիւնը եւ վերահաստատած, որ 2015-ին պիտի շարունակէ գործակցութիւնը Ե՛ւ պետական քաղաքականութեան բարեփոխումներու ուղղութեամբ՝ տրամադրելով վարկեր, Ե՛ւ մասնաճիւղային ծրագիրներու ուղղութեամբ՝ կատարելով ներդրումներ:

“2014 թուականի ընթացքին գործող ծրագիրներու իրականացման նպատակով փաստացի յատկացուած է աւելի քան 40 միլիոն տոլար: Գալ շաբաթ Հայաստանի բարգաւաճման քաղաքականութեան վարկի ծիրին մէջ կը նախատեսուի 75 միլիոն տոլարի յատկացումը կառավարութեան” ըսած է Համաշխարհային դրամատան երեւանեան գրասենեակի տնօրէն Լօռա Պելլի:

“Աշխատատեղերը Հայաստանի համար բարգաւաճման գերակայ խնդիր են երկար ժամանակի հեռանկարներուն մէջ”, կ’ըսէ հաղորդագրութիւնը:



## Ամերիկայի Արեւելեան Թեմէն Գերպ

# ԳԵՐԱՇՆՈՐՅ Տ. ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ ՔԱՅԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵՑ ԲԵՆԻԱՄԻՆ ՍՐԿ. ՐԻԹՆԱՃԱՐԵԱՆԸ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան, Կիրակի Դեկտեմբեր 7-ին, աւելի քան 300 հաւատացեալներու ներկայութեամբ՝ Շարլօթ Նորթ Գարոլայնայի Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ քահանայ ձեռնադրեց Բրշ. Բենիամին Սրկ. Րիթնաճարեանը:

Շարլօթի եւ շրջակայքի մէջ շատ քիչ թիւով հայեր կը բնակէին: Կարգ մը ազգասէր հայերու հեռաձայնային փնտռութիւններէ ետք՝ 1988 թուականին սկսան մէկտեղուիլ եւ փոքրիկ համայնք մը կազմել: Շնորհիւ Փենսիլվեմիա բնակող ազգային բարերարներ Տէր եւ Տիկին Սարգիս եւ Պապի Յակոբեաններու առատաձեռն նուիրատուութեան՝ կառուցւեցաւ Ս. Սարգիս Եկեղեցին եւ յարակից բաժանմունքները: 2005 թուականին էր որ թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան օծեց Ս. Սարգիս Եկեղեցին: Այսօր, Եկեղեցւոյ համայնքը կազմակերպուած ծուխի վերածուած է՝ Շարլօթի եւ շրջակայ քաղաքներու հաւատացեալներու անդամակցութեամբ:

Քահանայական Կոչման արարողութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, Դեկտեմբեր 6-ի երեկոյեան: Իսկ ձեռնադրութիւնը՝ Կիրակի Դեկտեմբեր 7-ին՝ Ս. Պատարագի ընթացքին: Ձեռնադրութեան խարտաւիլակն էր Առաջնորդարանի Գրիգոր եւ Գլարա Ջոհրապ Տեղեկատուութեան Կեդրոնի տնօրէն Հոգշ. Տ. Դանիէլ Վրդ. Ֆրնտըքեան: Ներկայ էին նաեւ Թեմական Պատուիրակ եւ Միջ-Եկեղեցական Յարաբերութեանց վարիչ Գերշ. Տ. Վիգէն Արք. Այգազեան, Ս. Ներսէս Ընծայարանի տեսուչ Արժշ. Տ. Մարտիրոս Ա. Քինյ. Չեւեան, նորընծայ քահանային ծնողքը, Թեմական Խորհուրդի ատենապետ Տիար Ճէյմս Գալուստեան, փոխ ատենապետ Տիար Փօլ Մարտոյեան, ինչպէս նաեւ՝ տարբեր քաղաքներէ եկած հիւրեր:

Ձեռնադրիչ Առաջնորդ Սրբազան Հայրը նորընծային ճակատն ու ձեռքերը Ս. Միւռնոյով օծելէ ետք՝ զայն Տէր Սամուէլ Քահանայ վերանուանեց եւ տուաւ իր յորդորականը: Սրբազան Հայրը ի մէջ այլոց ըսաւ. «Նորընծայ Տէր Սամուէլ Քրիստոսը պիտի ներկայացնէ իր հօտին, եւ նոյն ատեն իր հօտին անունով պիտի ներկայանայ Աստուծոյ եւ Տիրոջ պիտի ներկայաց-

նէ իր հաւատացեալներուն խրնդրանքները եւ անոնց համար պիտի հայցէ Աստուծոյ ողորմութիւնն ու օրհնութիւնը: Տէր Հայրը երբ կոչումը զգաց եկեղեցական ասպարէզ ընդգրկելու՝ իր ամբողջ հոգիով եւ վճռականութեամբ՝ աշխատանք տարաւ արժանի թեկնածուն ըլլալու այդ կոչումին: Աղօթեմք որ Տէր Սամուէլ շարունակէ իր կոչումին հետեւիլ, կոչում՝ որ արդիւնքն է Աստուծոյ եւ իր ժողովուրդին հանդէպ իր ունեցած սիրոյն:

Եկեղեցական արարողութեանց երգեցողութիւնը ղեկավարեց Ս. Վարդան Մայր Տաճարի դպրաց դաս երգչախումբի խմբավար Խորեն Մէլիսանեան:

Յաւարտ Ս. Պատարագի՝ նորընծայ Տէր Սամուէլ Քահանան եկեղեցւոյ դասին մէջ ընդունեցաւ շնորհաւորութիւնները ներկայ եկեղեցականներուն եւ հաւատացեալներուն, որոնք համբուրեցին Ս. Միւռնոյով օծուած ձեռքը:

Եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ հանդիսաւոր ճաշկերոյթ, որուն բացման աղօթքը արտասանեց Գերշ. Տ. Վիգէն Արք. Այգազեան: Հանդիսավարն էր Տայան Թիւրքը: Խօսք առին Հոգշ. Տ. Դանիէլ Վրդ. Ֆրնտըքեան, Օխական Խորհուրդի ատենապետ Տիար Յակոբ Սարգիսեան, Տիկնանց Միութեան անդամ Տիկ. Նօէլ Սարգիսեան նորընծայ քահանային նուիրեց ձեռաց խաչ մը, իսկ Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան կողմէ Տիար Ալեքս Մանուչարով նուիրեց Ս. Գիրք մը:

Գործադրուեցաւ զեղարուեստական յայտագիր:

Շնորհակալութեան խօսքով հանդէս եկաւ նորընծայ Տէր Սամուէլ, որ ի մէջ այլոց ըսաւ. «Քրիստոնէական դաստիարակութիւնը, որ մեր եկեղեցւոյ գեղեցիկ եւ բացառիկ ամանդութիւններն ու սովորութիւնները կ'աւանդէ, շատ կարեւոր է բոլոր համայնքներուն համար: Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ արդէն ունինք Երիտասարդաց Կազմակերպութեան անդամներուն համար Ս. Գրոց սերտողութեան յայտագիր, գործօն է Կիրակնօրեայ Վարժարանը եւ շուտով բացումը պիտի կատարենք Հայ Դպրոցին: Ծուխին մէջ ծրագիրներ պիտի մշակենք կարօտեալներուն օժանդակելու, հիւանդներուն եւ կամ տարեցներուն այցելելու նպատակով: Աստուծոյ օգնութեամբ կը յուսամ իրա-



Առաջնորդ Սրբազան Հայրը Ս. Միւռնոյով կ'օծէ նորընծայ քահանային ձեռքը

գործել այս նախատեսուած ծրագիրները:»

Փակման խօսքին մէջ Առաջնորդ Սրբազան Հայրը խնդրեց Տիրոջմէ՝ որպէս զի ներշնչէ, առաջնորդէ եւ պաշտպանէ նորընծայ Տէր Սամուէլը՝ երբ ան կը սկսի իր նոր առաքելութեան, եւ օրհնէ Երեցկին Տանիէլը՝ որպէս զի զօրավիգ կանգնի Տէր Հօր:

## ԱՐԺՇ. Տ. ՍԱՄՈՒԷԼ ՔՅՆՅ. ՐԻԹ-ՆԱՃԱՐԵԱՆ

Տէր Սամուէլ Քահանան ծնած է Յունիս 6, 1983ին՝ Ֆիլատելֆիա (Փենսիլվեմիա): Տրուած ըլլալով որ հայկական շրջանակէն եւ եկեղեցին հեռու կը բնակէին՝ ամէն զիշեր օրօրի փոխարէն հայրը «Ս. Աստուած»ը եւ «Հայր Մեր»ը կ'երգէր: Ծնողաց քրիստոնէական ոգին եւ զգացումները փոխանցուած են իրեն: 2001 թուականին ան աւարտած է Միմիսթայի երկրորդական վարժարանը եւ սկսած է յաճախել նոյն շրջանի Սէյնթ ճան համալսարանը՝ հետեւելով կենսաբանական եւ աստուածաբանական ճիւղերուն եւ ստացած է Աստուածաբանութեան Մագիստրոսի աստիճանը (2010ին): 2004 թուականի ամրան գտնուած է Հայաստան եւ մեծապէս տպաւորուած՝ ամրապնդելով իր հայկական հաւատքն ու ինքնութիւնը: Հետեւած է Ս. Ներսէս Ընծայարանի սարկաւազներու պատրաստութեան ամառնային դասըն-

թացքներուն: 2005-2010 տարիներուն աշակերտած է Ս. Ներսէս եւ Ս. Վլատիմիր Ընծայարաններուն: Յունիս 5, 2010-ին ամուսնացած է Տանիէլ Տէր Աստուրեանի հետ (քահանայի թոռ): Ապա, մեկնած է Դամասկոս (Սուրիա) եւ տեղւոյն Առաջնորդ Գերշ. Տ. Արմաշ Եպս. Նալպանտեանի հսկողութեամբ քանի մը ամիս հետեւած է Հայերէն լեզուի դասերու: Մէկ տարուան ծրագրով մեկնած է Երուսաղէմ՝ իր ուսումը շարունակելու Հայերէն լեզուի, եկեղեցական արարողութեանց եւ հայրաբանութեան ճիւղերուն մէջ: 2011 եւ 2012 տարիներուն ան նշանակուած է Ֆէրլոնի (Նիւ ճրդի) Սրբոց Դեւոնդեանց Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժշ. Տ. Տիրան Քինյ. Պօհաճեանին օգնական: Սեպտեմբեր 10, 2013ին ձեռնադրուած է սարկաւազ Ֆէրլոնի (Նիւ ճրդի) Սրբոց Դեւոնդեանց Եկեղեցւոյ մէջ: 2013 թուականի Սեպտեմբերէն սկսեալ ան կը վարէր հոգեւոր մատակարարի պաշտօնը Շարլօթի (Նորթ Գարոլայնա) Ս. Սարգիս Եկեղեցւոյ:

Նորընծայ Տ. Սամուէլ Քահանան քառասունքի շրջանը անցրնելէ ետք Ս. Ներսէս Ընծայարանին մէջ՝ Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ նշանակուած է հոգեւոր հովիւ Շարլօթի Ս. Սարգիս Եկեղեցւոյ

ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ  
Դեկտեմբեր 15, 2014  
Նիւ Եորք, Ն.Ե.

## ԴԱՍԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԵՐԵԿՈՅ

Դեկտեմբեր 21-ին Նիւ Եորքի Սբ. Գր. Լուսավորիչ Մայր Եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ դասական երաժշտութեան համերգ: Օրուայ հանդիսավարն էր ամերիկահայ հանրածանօթ և վաստակաշատ երաժիշտ-խմբավար՝ Գրիգոր Փիտեմեան, որ իր խօսքերուն մէջ մասնաւորապէս ըսաւ, «Հայ երաժշտութեան պատմութեան մէջ մենք ունեցած ենք տարբեր գերդաստաններ, մեծ ընտանիքներ, որոնք սերունդներով երաժիշտներ ունեցած են և զարգացուցած են հայ երաժշտութիւնը՝ ըլլալ Սփիւռքի կամ Հայաստանի մէջ: Այդ գերդաստաններէն մէկն է Սաթեաններու ընտանիքը: Այսօր մեր համերգի պատուաւոր հյուրն է Հայաստանի Կոմպոզիտորների Միութեան պատուաւոր Նախագահ,

պրոֆեսոր Արամ Սաթեանը:

Համերգային ծրագիրը բազմազան էր, ուր տեղ էին գտած՝ Սոֆիա Միքայելեանի, Անահիտ Կոստանեանի, Մելիք Մավիսագալեանի, Կոնստանտին Պետրոսեանի, Էդուարդ Սադոեանի և ուրիշների ստեղծագործությունները: Ներկաները ջերմութեամբ ընդունեցին Նուէ Կարապետեանի (սօփրանօ), Սարգիս Կարապետեանի (ջութակ) և Նուէն Հակոբեանի (դաշնամուր) ելոյթները:

Ներկաները ծափողջիւններով դիմաւորեցին Հայաստանի Կոմպոզիտորների Միութեան Նախագահ Արամ Սաթեանին, որ իր շնորհակալական խօսքերով անդրադարձաւ Սփիւռքի մէջ  
**Շար. Էջ 12**





# Յայտնի սրտաբան Յրայր Յովամիկեան Յայրենիքին մատուցած իր ծառայութիւններուն համար արժանացած է պատուոյ շքանշանի

«Մարդու սիրտը գերելը հեշտ է, շատեր կը յաջողին, իսկ ահա սիրտը փրկելը՝ միայն բացառիկներուն վերապահուած է: Բացառիկներէն է նաեւ սրտի վիրաբոյժ Յակոբ (Յրայր) Յովակիմեանը, որ 20 տարի առաջ եկաւ Յայաստան ու իր խումբին շնորհիւ աւելի քան 20 հազար մարդու կեանք փրկեց եւ կը շարունակէ փրկել: Ալպերթ Սթարի Ակադեմիական Կեդրոնի առաջատար սրտի վիրաբոյժ Յակոբ (Յրայր) Յովակիմեան ԱՄՆ-ի մէջ ձգեց ամէն ինչ ու եկաւ Յայաստան՝ իր օգնող ձեռքը մեկնելու հայ ժողովուրդին, Յայաստանի մէջ սրտի վիրահատութեան ծառայութիւն ստեղծելու: Այսօր Յայաստան ունի այդ ծառայութիւնը. ուղիղ 20 տարի առաջ ստեղծուեցաւ «Նորք Մարաշ» բժշկական կեդրոնը», - կեդրոնի 20-ամեակին նուիրուած տօնական ձեռնարկի ժամանակ ներկայացնելով անուանի բժիշկին՝ այս գնահատականները հնչեցուց հաղորդավարը:

Կեդրոնին մէջ կը կատարուին սրտի տարբեր վիրահատութիւններ (բացառութեամբ սրտի փոխպատուաստում): Վիրահատութիւնները կը կատարուին անկախ հիւանդի տարիքէն եւ կշիռէն: Կեդրոնը յազեցած է անհրաժեշտ եւ ժամանակակից սարքաւորումներով, նախատեսուած լիարժեք ախտորոշման եւ վիրաբուժական բուժման համար: Այս ամէնուն կեդրոնը հասած է տարիներու ընթացքին:

Առաջին վիրահատութիւնը տեղի ունեցած է 1994 թուականի Յունիսին:

«Յնծութիւն էր մեզի համար», - կը յիշէ կեդրոնի տնօրէն Լիտիա Մուրատեանը: Վիրահատուողը եղած է երեխայ:

Գիտութիւններու ազգային ակադեմիայի մէջ կեդրոնի 20-ամեակին նուիրուած տօնական ձեռնարկ կազմակերպուած էր: Ձեռնարկի սկիզբը ցուցադրուեցաւ կեդրոնի 20-ամեայ գործունեութեան մասին պատմող շարժանկար, այնուհետեւ Լիտիա Մուրատեան իր խօսքին մէջ ներկայացուց կեդրոնի ստեղծման պատմութիւնը:

«Մեր վիրաբոյժները կը պատրաստուին այստեղ, պարբերաբար կը վերապատրաստուին Եւրոպայի եւ ԱՄՆ յայտնի հիւանդանոցներուն մէջ: Մեր կեդրոնը իր կառուցուածքով, չափորոշիչներով չի զիջիր եւրոպական հիւանդանոցներուն, մեր վիրաբոյժները իրենց մասնագիտական կարողութիւններով չեն զիջիր եւրոպացի ու ամերիկացի մասնագետներուն», - ըսած է կեդրոնի տնօրէնը:

Ան վստահեցուցած է, որ կեդրոնը ինչպէս առաջ, հիմա, այնպէս ալ յետագային պիտի շարունակէ իր գործունեութիւնը ի շահ հիւանդին, ի շահ ժողովուրդին, պիտի նպաստէ առջապահութեան համապատասխան ծրագիրներու ապագայ իրականացման:

Այսօր բազմաթիւ մարդոց կեանք



քը փրկած Յակոբ (Յրայր) Յովակիմեան ստացաւ իր արժանի պարգեւը՝ անձամբ Յանրապետութեան նախագահի ձեռքէն, որ ներկայ էր տօնական ձեռնարկին: Առողջապահութեան բնագաւառին մէջ մատուցած նշանակալի ծառայութիւններուն, ներդրած անձնական մեծ աւանդին, մասնագիտական բարձր հմտութիւններուն համար սրտային վիրաբոյժ Յակոբ Յովակիմեան պարգևատրուեցաւ, Յայրենիքին մատուցած ծառայութիւններուն

համար՝ երկրորդ աստիճանի մետալով:

Պարգեւներու արժանացան կեդրոնի այլ մասնագետներ եւս:

«Շնորհաւորում եմ բժշկական կեդրոնին 20-ամեակի կապակցութեամբ, բայց առաջին հերթին՝ որակեալ գործունեութեան համար: Շնորհակալութիւն եմ յայտնում կեդրոնի բոլոր աշխատակիցներին՝ բժշկից մինչեւ պահակ», - իր խօսքին մէջ ըսած է նախագահ Սերժ Սարգսեան:

## Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի հիմնադրման 50-ամեակին նուիրուած հանդիսութիւնը

Դեկտեմբեր 9-ին ՀՀ Սփիւռքի նախարարութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի հիմնադրման 50-ամեակին նուիրուած հանդիսութիւն, որին մասնակցում էին ՀՀ Սփիւռքի նախարար Յրանոյշ Յակոբեանը, ՀՀ Արտաքին Գործերի նախարարի տեղակալ Սերկէյ Մանասարեանը, պետական, հասարակական գործիչներ, սփիւռքեան կառույցների ներկայացուցիչներ, գիտնականներ, մտաւորականներ:

ՀՀ Սփիւռքի նախարար Յրանոյշ Յակոբեանը բարձր գնահատեց կոմիտէի անցած ուղին եւ նրա դերը Յայրենիք- Սփիւռք գործակցութեան պատմութեան մէջ, այնուհետեւ նա պատկերաշարով ներկայացրեց կոմիտէի գործունեութիւնը, իրականացրած ծրագրերը, կառուցւածքն ու ձեռքբերումները:

Նախարարը նշեց, որ 1960-ական թուականներին հայ ժողովուրդը հոգեւոր զարթօնք էր ապրում եւ նման կառույցի ստեղծումը կենսական անհրաժեշտութիւն էր: 1964թ. ՀՀ առաջին քարտուղար Յակով Չարոպեանի անմիջական աջակցութեամբ Յայաստանի յառաջադէմ ուժերի ջանքերով ստեղծուեց Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէն, որի նախագահ նշանակուեց Վարդգէս Համազասպեանը: Կոմիտէն իր գոյութեան ընթացքում երեք նախագահ է ունեցել, բոլորն էլ գիտնականներ եւ պետական գործիչներ: Համազասպեանի գործը շարունակեցին Կառլէն Դալլաբեանը եւ Հրաչիկ Սիմոնեանը: Կոմիտէն լայնածաւալ եւ համընդգրկուն գործունեութիւն է ծաւալել Սփիւռքում հայապահպանութեան, հայկական մշակութի տարածման, հայրենիքի եւ Սփիւռքի փոխճանաչողութեան ուղղութեամբ:

Կոմիտէի թիմը փորձեսփոխալ եւ գրագետ, հմուտ ու շրջահայեաց աշխատակիցներից էր բաղկացած: Կառույցի շուրջը հաւաքուել էր Հայաստանի եւ Սփիւռքի ամենատաղանդաւոր



Ծնողները երեք անգամ Գանատայէն Հայաստան գացին եւ օրինական բոլոր միջոցառումներէն ետք, եւ ի գին արդար զոհողութեանց, հազիւ երկու շաբթուան նորածին երախաները Գանատա բերին: Կը յիշեմ իմ կատարած բաժինը եւս, երբ դիմումնագիրներն ու յարակից վկայագիրները արեւելահայերէնի թարգմանեցի: Երջանիկ եղանք բոլորս: Մկրտեցի երախաները ու այսօր 12 տարեկան պատանիներ արդէն աւարտած են միջնակարգ հայ վարժարանը, հայերէն սահուն կը խօսին եւ երկու անգամ ալ Հայաստան այցի գացին իրենց ծնողաց հետ:

Հայ Կին բարեգործ այս Հիմնարկը հինգ յղի կանանց դարմանատունները բանալով, մեզի համար որպէս երախտագէտ հոգեւորականներ, բացած կ'ըլլան յոյսի եւ լոյսի դռներ Հայրենիքէն ներս: Յատկապէս ազդուեցայ երբ մի քանի տարի առաջ տեղեկացայ Եղուարդի Կեդրոնի բացման մասին՝ բարերարութեամբ ինծի մօտէն ծանօթ եգիպտահայ Հայկազ եւ Մարի-Լուիզ Ինճիճեաններուն՝ ի յիշատակ իրենց սիրեցեալ դստեր Նորայի: Թերթին մէջ տարի մը առաջ կարդացի նաեւ Երեւանի յղի կանանց կեդրոնի բացման մասին՝ մեր սիրելի եւ յարգելի Տիկ. Արշակունի Դաւիթեանի բարերարութեամբ եւ իր ձեռքով, երրորդ մըն ալ Կիւմրիի մէջ, նաեւ չորրորդն ու հինգերորդը:

Անվարան պիտի ըսենք 20-ամեակի այս երջանիկ առիթով թէ Միացեալ Նահանգաց Երեւմտեան շրջանի ԶԲԾԻութեան հովանին վայելող ձեր այս Հայ Կին վարչակազմը, ատենապետութեամբ Տիկ. Սոնա Եագուպեանի, որուն իր աշակերտական տարիներէն ծանօթ եմ, իր պատուաբեր դերին մէջ կը գտնուի՝ գործօն, ուշադիր եւ հետեւողական յատուկ յայտագիրներով:

Կը մաղթեմ բոլորիդ յանուն հայ հոգեւորականութեան բարի երթ եւ լիակատար յաջողութիւն:

## Խաչքարի օծում՝ Ֆրանսայի Լուսինեան քաղաքին մէջ

Ֆրանսայի Փուատիե Նահանգի Լուսինեան քաղաքին մէջ Դեկտեմբեր 13-ին տեղի ունեցաւ Հայոց վերջին թագաւոր Լեւոն V-ի (հայկական պատմագրութեան մէջ կը յիշատակուի նաեւ իբրեւ Լեւոն VI), Ֆրանսայի ազատութեան համար ինկած մարտիկներու եւ Հայոց Ցեղասպանութեան զոհերու յիշատակին նուիրուած խաչքարի հանդիսաւոր բացման եւ օծման արարողութիւնը, որուն ներկայ էին նաեւ ՀՀ սփիւռքի նախարար Զրաւոյշ Յակոբեան եւ Ֆրանսայի մէջ ՀՀ դեսպան Վիգեն Զիթեչեան: Հանդիսութեան կը մասնակցէին Ֆրանսայի Ազգային Ժողովի պատգամաւոր Ժան-Միշել Կլեման, Փուատիեի Նահանգային խորհուրդի նախագահ Զլոտ Պերթոն, Լուսինեանի քաղաքապետ Ռենէ Ժիբոն, Ֆրանսայէն ու յարակից երկիրներէն ժամանած հարիւրաւոր հաւեր, հիւրեր:

Այս մասին կը հաղորդէ ՀՀ սփիւռքի նախարարութեան մամուլի եւ տեղեկատուութեան գրասենեակը:

Հայկական տուֆէ քանդակուած խաչքարը տեղադրուեցաւ Լուսինեանի քաղաքապետարանի, «Արա-

րատ» ընկերակցութեան, «Ֆրանսահայ Նախկին ռազմիկներու եւ դիմադիրներու միութեան» եւ Ֆրանսայի մէջ Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի ձեռնարկները համակարգող յանձնաժողովի համատեղ ջանքերով, իսկ օծման կարգը կատարուեցաւ Նորվան արքեպիսկոպոս Չաբարեանի կողմէ, աղօթեց նաեւ Եւրասիայի Հայ Աւետարանական եկեղեցիներու միութեան նախագահ Վերապատուելի դոկտոր Ռենէ Լեւոնեան: Այնուհետեւ ծաղկեպսակ դրուեցաւ խաչքարին մօտ:

Իրենց ողջոյնի խօսքին մէջ Ժան-Միշել Կլեման եւ Զլոտ Պերթոն բարձր գնահատեցին հայ համայնքին դերը Ֆրանսայի կեանքին մէջ, հայ-ֆրանսական բարեկամութեան ամրապնդման գործին մէջ: Զաղաքապետ Ռենէ Ժիբոն նշեց, որ Լուսինեան հայկական արմատներով ֆրանսական քաղաք է, ուր այցելող հայերը այսուհետ պէտք է զգան ինչպէս իրենց տան մէջ:

Նախարար Զրաւոյշ Յակոբեան, բարձր գնահատելով եւ խորհրդանշական համարելով խաչքարի տեղադրումը Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի նախաշեմին,



նշեց, «Պահը պատմական է, բարոյական է, քաղաքական է եւ ազգային է: Զաղաքի այցելուին խաչքարը կը յիշեցնի հինգ կարեւոր փաստ՝ այն, որ հայերը հազարամեակների պատմութիւն ու Կիլիկեան թագաւորութիւն են ունեցել, մեր Կիլիկիայի վերջին թագաւորը Լեւոն V-ն է, ով իր վերջին հանգրուանին է գտել Ֆրանսիայում, խաչքարը նուիրւած է նաեւ Ֆրանսիայի ազատագրման համար զոհուած հայ մարտիկներին, ովքեր խաղաղութիւն,

ազատութիւն պարգեւեցին այս հրաշալի երկրին, այն մարմնաւորում է հայ-ֆրանսիական դարաւոր բարեկամութիւնը եւ ի վերջոյ, Հայոց Ցեղասպանութեան անմեղ զոհերի յիշատակը: Ընդամենը ամիսներ յետոյ առաջադէմ մարդկութեան հետ մենք ոգեկոչելու ենք Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցը եւ յայտարարելու ենք՝ «Յիշում եմ եւ պահանջում»: Թուրքը

**Շար. էջ 14**



# ԴԱՐԱԴԱՐՁԱՅԻՆ ԽՈՅԵՐ՝ ԱՄԱՆՈՐԻ ՍԵՄԻՆ



## ԱՐԱՄ ՍԵՓԵԹՃԵԱՆ

2015 թուականն է:

Ապրիլեան Ցեղասպանութեան դարադարձը այնքան մօտեցած է մեզի, ու «*Ժամանակ-դատաւոր*»ը պիտի հանդիսանայ այնքան *իրաւախոհ* ու *դաժան* մեր ամէնօրեայ դանդաղ եւ անպատրաստ վերաբերմունքին հանդէպ, որուն համար դժուար է պատասխան մը գտնել:

Քանի մը տասնամեակներէ ի վեր, Ցեղասպանութեան իւրաքանչիւր «տարելից» կը հանդիսանայ «հանգրուան մը» մեզ առաւել եւս իմաստնացնող եւ զգաստացնող: Սակայն, այն ինչ որ իրականութիւն դարձաւ անցնող հարիւրամեակի Բ. կէսէն ետք, «ընդունելի» համարուելով համդերձ, մնաց լոկ՝ իբրեւ *երեւոյթ*, բայց ո՛չ *խորք*:

Այո՛. *երեւութեան* ցուցանիշներ են կատարուած համաժողովներ եւ ուխտագնացութիւններ, սակայն՝ անոնք մնացին *մակերեսը* այն խորախորհուրդ *խորք*ին, որուն չհասան մեր կարելիութիւններն ու կարողութիւնները:

Վերապրող սերունդին պարտքն ու պարտականութիւնն էր, անմիջապէս ետք Արեւմտահայաստանի պարպումէն, ձեռնարկել մօտիկ անցեալին մաս կազմող, մեր պապենական հողին վրայ մեր արձանագրած կորուստին, մարդկային, հողային, կալուածային, բարոյամտաւորական ու գրական-գեղարուեստական հարստութիւններու *վիճակագրութիւնը*: Եւ այս՝ հիմնուած իրաւագիտական հիմունքներու վրայ: Լուսանկարներու ընկերակցութեամբ:

Առաջին կիսադարուն, եթէ ժամանակի մեր ղեկավարները չկարողացան պատրաստել, ինչո՞ւ համար Բ. կիսադարուն Ցեղասպանութիւնը մնաց միայն իբրեւ «*Յայկական հարց*» ու չվերածուեցաւ «*Յայ Դատ*»ի, նախածեռնութեամբը ազգը ղեկավարող կազմակերպութիւններու: Բոլորս ալ, շատ լաւ գիտենք, թէ դատական թղթածրարները փոքր թէ մեծաչափ ոճիրներու պարագային, իրաւական ինչպիսի նախապատրաստական աշխատանք կը պահանջեն: Եւ նման դատավարութիւնները կ'ըլլան դատական հետապնդումներով եւ իրաւաբանական լրջագոյն գործելակերպով: Վերջին, երեք տասնամեակներու ընթացքին, բազմիցս արտայայտուած ենք այս ուղղութեամբ, թէ փոքրածաւալ ոճիրներ երբ իրենց փաստաբանը կ'ունենան, ինչո՞ւ համար, միջազգային մակարդակի

վրայ պիտի չբարձրացուէր 1915-23-ի հայոց վրայ գործադրուած ցեղասպանութիւնը, *մե'ր իսկ* պապերու *հայրենի հողին վրայ*, որ մեծապէս կը տարբերի այլուր իրականացած ողջակիզումներէն, որոն առաջին օրինակը հանդիսացաւ *հրէական հոլոքոսթը*:

Ուրեմն, շատ պարզ է: Ունեցանք «*Յայ Դատ*» անունը կրող մարմիններ, սակայն՝ միջազգային դատ-դատաստանին չենք կրցած ներկայանալ իբրեւ տարագիր «*Յայ Ժողովուրդ*»ը ներկայացնող «*Համասփիւռքեան կեդրոնական Միացեալ Մարմին*»:

Ու ցաւօք սրտի, անկախ Հայաստանի հանրապետութեան երկրորդ նախագահն իսկ կը յայտարարէր, թէ «*իրաւական հիմքեր կը պակսին մեզի*» նման պահանջատիրութեան մը համար: Մինչ՝ խորի. Հայաստանի վերջին տասնամեակներու դիւանագիտական ներկայացուցիչներէն՝ պատմագէտ ճոն Կիրակոսեան, իր պաշտօնավարութեան տարիներուն, բազմահարիւր էջերով հատորներ հեղինակած էր «*յանուն արդարադատ ճշմարտութեան*» ու զանոնք յանձնած Միջազգային ատեաններու ուշադրութեան:

Երբ այս է տիրող ընդհանուր վիճակը, մեզի կը մնայ անգամ մը եւս վերաքաղ մը կատարել ցարդ *իրագործութիւն* եւ մեր ունեցած թերացումներուն:

Նախեւառաջ մեր պարտքն է շնորհակալութիւն յայտնել հայ ժողովուրդին արդար պահանջատիրութեան ջերմ կողմնակից - բարեկամներուն, որոնք պետական մակարդակով ընդունեցին ու ճանաչում բանաձեւին հայոց Ցեղասպանութեան: Անոնք կը մնան մեր *մնայուն բարեկամները*: Նոյն եւ հաւասարապատիւ մեր յարգանքը կ'ընծայենք պետական-քաղաքական - պատմագիտական այն հռչակաւոր անձնաւորութիւններուն, որոնք իրենց կեանքին օրինակով եղան մեցուկ մեր ազգային իրաւունքներու ճանաչման անյետաձգելի գործին: Ապա՝ անմիջապէս անցնիլ հետեւեալ կէտերու իրականացման.

ա.- Հայրենի պետութեան գիտակից յանձնառութեամբ, հայրենի եւ սփիւռքահայ բազմակողմանի կառոյցներու արդար մասնակցութեամբ, մօտաւորապէս՝ նման «Հայաստան Համահայկական Հիմնադրամ»ի, կազմակերպել Համահայկական Միացեալ Գերագոյն խորհուրդ մը (կամ *Գոնկրէս* մը՝ միջազգային բառի օգտագործումով), իր մնայուն կեդրոնատեղիով, աշխատանքային հիմնական ծրագիրներով եւ վարչական լիազօրումներով տնօրինուած աշխատակազմով:

Այս հեղինակաւոր Մարմինն է որ պիտի լծուի մեր «Մեծ Երազ»ին իրականացման աշխատանքին: Յարդ պատրաստուած բազում նիւթեր կան, որոնց ցուցակագրումը պէտք է կատարուի յիշեալ կեդրոնատեղիէն ներս: Դատական թղթածրարներու պատրաստութիւնը բազում տարիներու աշխատանք կը պահանջէ, որուն սկըզբնակէտը կրնանք յայտարարել 2015 թուականը:

Մնայուն կոչուող այս Մարմինն է որ պիտի կազմակերպէ *արեւմտահայ ծագումով* սփիւռքահայ տարագիր սերունդներու ցուցակագրումը, պիտի կազմակերպէ Հայ Սփիւռքը, եւ արդարօրէն լսելի պիտի դարձնէ սփիւռքահայութիւնը ոգեշնչող իտէալներն ու հետապնդած նպատակները: Մարմին մը՝ որ պիտի բանակցի հայրենի Ազգային Ժողովին հետ, եւ անկէ բխած պաշտօնական պատւիրակութիւնը պիտի ներկայանայ Միջազգային դատական ատեաններուն, յանուն սփիւռք դարձած տարագիր արեւմտահայութեան, որ իսկական ժառանգորդն է Արեւմըտահայաստան զաւթեալ հայրենիքին:

Երբ կարենանք իրականացնել այս *Առաջին Քայլը*, որոշ չափով մեղմացած կ'ըլլայ «կուսակցութիւններուն վերագրուած մեղադրանքը» իբրեւ պատճառ «ազգային անհամերաշխութեան»:

բ.- 2015 թուականը եւ անոր յաջորդելի ապագայ բոլոր տասնամեակները ծնունդ պէտք է տան *իտէալ ՆՈՐ ՀԱՅ*ու կազմաւորումին: Անյետաձգելի անհրաժեշտութիւն է *վերադաստիարակութիւնը* հայ ժողովուրդին: Երեք թէ կրտսեր սերունդները ոգեշնչել ազգային-պետական նոր գաղափարախօսութեամբ մը՝ *ՀԱՅԱԿԵՐ-ՏՈՒՄ* բառին տալով նոր եւ ամենէն ազնուական շեշտադրումը:

գ.- Արեւելահայաստանի եւ Արցախի մեր անկախ հանրապետութիւններուն շնորհել այնպիսի միջոցներ, ուր բնակութիւն հաստատել, կառնած մնալ հայրենի հողին, տէր ըլլալ անոր սահմաններուն անվտանգութեան, իր ազգաբնակչութեան բարեկեցիկ վարք ու կենցաղով հրապուրուած, հայրենադարձի նոր ալիքներ թել ու թռիչք տան թէ՛ արտագաղթող զանգուածներուն եւ թէ սփիւռքահայ նորահաս սերունդներուն, որպէսզի՝ վերջնական կայքը 7 միլիոն տարասփիւռ հայութեան հանդիսանայ մերօրեայ անկախ հայրենիք՝ Հայաստանի հանրապետութիւնը:

Ուրեմն, հարկ է որ օգտագործենք հնգամեայ փլանաւորումի կանոնակարգը:

Անկախութեան թուականէն մինչեւ այսօր, քառորդ դար սահեցաւ: Նոյնքան տարիներ՝ երկրաշարժի անխուսափելի *պատուհաս*էն: Տակաւին վերքը չէ սպիացած բազմահազար ընտանիքներու սիրտին խորը: Անօթեւան տնակներու մէջ պատսպարուող ընտանիքներ քառորդ դարէ ի վեր *օգնութիւն* կ'աղերսեն հայրենի իշխանութենէն: Յետ այսու, երկրաշարժի իւրաքանչիւր տարելիցի թուականը պիտի կոչուի «*Ամօթի Օր*», որուն սրբագրութիւնը կը կարօտի Հայաստան Համահայկական Հիմնադրամին օրինակով նորաստեղծ դրամահաւաքի շարժումին:

Ժամանակն է այլեւս, որ սփիւռքահայուն վերագրուած «ռոմանթիկ հայրենասիրութիւն»ը ստանայ «տրամաբանական հայրենակերտում վերանուանումը»: Հայ թէ օտար զբօսաշրջիկներ իրօք կը հիանան Երեւանի գեղատեսիլ եւ շքեղ նոր շինարարութիւններու, սակայն, *հիացումը* կանգ կ'առնէ այնտեղ՝ ուր տակաւին հեռակայ գիւղական կենցաղային պայմանները կը յիշեցնեն մեզի հեռու միջնադարը: Ուրեմն, Հայրենիքին բարգաւաճումը պէտք չէ սահմանափակել հմայքովը քաղաքամայր Երեւանին:

դ.- Ամէն անգամ երբ կ'ողջունենք Նոր Տարուան գալուստը, մեզ կը մտահոգեն մեր անկատար մնացած իղծերուն ճակատագիրին հետ առընչուած հարցերը:

Ներկայ Ամանորը 2015 թուականը կը կրէ:

Որքան երազ ու տեսիլք, յուսավառ տենչեր ու ծրագիրներ մեզ անակնկալներով պիտի դիմաւորեն:

Ըլլանք իրատես՝ բայց ոչ յոռետես, որպէսզի չըլլանք պատրանաթափ:

Քաղաքական վերիվայրումները համաշխարհային երեւոյթներ են, որոնց դիւանագիտական խաղերուն կրնան զոհ երթալ նաեւ համազգային բնոյթի մեր համակրանքներն ու հակակրանքները:

Հայաստանն ու հայ ժողովուրդը միջազգային մեծ ընտանիքին մէկ չնչին տոկոսը կը կազմեն: Քաջաբար դիմագրաւենք մեր գոյութեան սպառնացող բոլոր մարտահրաւրները:

2015 թուականը միայն 100-րդ տարելիցը չէ հայ ժողովուրդին մեծ ողբերգութեան: Այլ, հայկական նոր մտածելակերպի, արդիական ու գերարդիական մտայղացումներու Առաջին տարին:

Ազգային «*կորուսեալ ժամանակ*»ի որոնումի *նոր սկիզբ մը*:

Այս մտածումներով կ'ողջունենք Դարադարձը Ապրիլեան Ցեղասպանութեան:

## Դասական երաժշտութեան...

Շաբ. Էջ 5-Էն

կատարուող համերգային ծրագրերուն և շնորհաշատ երաժիշտներու կատարողական բարձր արուեստին: Յարգելով և սիրելով հայ երգարուեստը, պետք է սիրել նաև դասական երաժշտութիւնը:

Շնորհիւ հանրածանօթ կոմպոզիտոր Կոնստանտին Պետրոսեանի եւ Հայաստանի Կոմ-

պոզիտորների Միութեան համատեղ համագործակցութեան, մենք կարողացանք տարբեր քաղաքներու մէջ կազմակերպել այսպիսի համերգներ:

Ա. Սաթեանը իր գոհունակութիւնն ու շնորհակալութիւնը յայտնեց Նիւ Եորքի Սբ. Գր. Լուսաւորիչ Մայր եկեղեցւոյ քահանայ Մեսրոպ Լազիսեանին, ինչպէս նաև Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեանը, որոնք կազմակերպել էին այս գեղեցիկ երաժշտական երեկոն:

Համերգը աւարտեցաւ կոմպոզիտոր Ա. Սաթեանի «Աւե Մարիա», երգով, որը կատարեց Պոստոնի ծանօթ երգչուհի, միջազգային մրցոյթներու դափնեկիր՝ Նարինե Օճախեանը՝ հեղինակի նուագակցութեամբ:

Նիւ Եորք

**ՌՈԲԵՐՏ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ**  
*Լուսանկարները՝ հեղինակի*



# Գրիգոր Իսթամպուլի. «Նոր սերունդը պետք է մտնի եւրոպական քաղաքականութեան մէջ»

**- Յարգելի պրն. Իսթամպուլի, նախ կը ցանկանայի տեղեկանալ, թէ ինչպէ՞ս էք յայտնուել Իտալիայում:**

- Հայրս Կիլիկիայի Ուրֆա քաղաքից է, 1915 թուականի ցաւալի ջարդերից յետոյ հասել է նախ Լիբանան, յետոյ Հալէպ, եւ մեծացել որբանոցում: Ես ուսումս ստացել եմ նախ Բարեգործականի Լազար Նաճարեան-Գալուստ Կիւլպէնկեան նախակրթարանում, իսկ 1966-ին տեղափոխել եմ Պէյրուի, ուսումս շարունակելով ստացել եմ պէքէլօրիէ վկայական եւ յետոյ անցել եմ վաճառականութեան գործին: Մինչ այսօր նոյն արհեստի մէջ եմ: Իսկ 1980-ականների սկզբին Իտալիայում հաստատուեցի՝ նախ Դոսքանա նահանգում, իսկ 1985-ից՝ Միլանում: Միլանի Իտալիոյ Հայոց միութեան անդամ եմ եղել 1996-2002թթ-ին, իսկ 8 տարի՝ Միլանի ՀԲԸՄ վարչութեան անդամ: Վերջին չորս տարիներից Եւրոպայի ՀԲԸՄ վարչութեան անդամ եմ եւ ներկայացնում եմ Իտալիան:

**- Այսօր ի՞նչ վիճակում է Իտալիայի հայ համայնքը, որքա՞ն հայաստանցիներ են եկել վերջին տարիներից, եւ ինչպիսի՞ փոփոխութիւններ են տեղի ունեցել անկախութեան շրջանից յետոյ: Ի՞նչ մարտահրաւէրներ ունի հայ համայնքը:**

- Պէտք է անկեղծ լինեմք եւ ասենք, որ թէ՛ Միլանի, եւ թէ՛ Իտալիայի հայութեան թիւը միշտ փոքր է եղել:

Ժիշդ է, այսօր ճշգրտում թիւ չունենք, բայց կարծում ենք, որ հին ու նոր եւ իտալացած հայերը միասին 3000-ը չեն անցնում: Իհարկէ, իտալիայում հայկական ամենահզօր կենտրոնը Միլանն է՝ իր Հայ տնով, Սուրբ Էջմիածնի հայկական եկեղեցիով: Ընդ որում, մեր Հայ տունը բաց է բոլոր հայերի համար, եւ որեւէ զանազանութիւն չկայ՝ բոլոր կուսակցութիւնների կամ միութիւնների անդամների առջեւ բաց է: Հայկական համայնքը 1990-ի սկզբներից է, որ մի քիչ աճել է: 2012-ին Ապրիլին մենք նշեցինք ՀԲԸՄ-ի Միլանի մասնաճիւղի 100-ամեակը: Դա նշանակում է, որ արդէն 1912թ-ին Բարեգործականի կենտրոն ունէինք Իտալիայում: Թէեւ 100 տարի է անցել, բայց հայ գաղութը դեռեւս փոքր է մնացել:

Իհարկէ, չպէտք է մոռանանք Միսիթարեաններից, որ դեռեւս 1700-ական թուականներից հաստատուել են Վենետիկում եւ ունեցել են իրենց կողմնակիցները: Վենետիկում, Ժենովայում եկեղեցիներ են կառուցել: Իտալիայի հարաւի Նեափոլ քաղաքի կենտրոնական թաղամասերից մէկի անունը՝ Via San Gregorio Dei Armeni- Հայոց Սուրբ Գրիգորի թաղամաս եւ անուանել: Այնտեղ



Գրիգոր Իսթամպուլի

Սուրբ Գրիգոր Լուսաւորչի անունով եկեղեցի կայ, ասել է թէ այնտեղ հայեր են եղել մի քանի հարիւր տարի առաջ: Մեր գաղութը շատ զգալուն է եւ շուտ է ձուլուում քրիստոնեաների շրջապատում: Գուցէ արաքական երկրներում այդ ձուլումը շատ դժուար է եղել, բայց քրիստոնեական երկրներում շատ դիւրին է: Այսօր ՀԲԸՄ անդամները 35 հոգի են, որ գալիս են ու ընտրում վարչութիւն: Բայց ամէն կերպ աշխատում են, որ նոր սերնդին քաջալերեն, որ իրենց լեզուն ու պատմութիւնը իմանան, չմոռանան եւ հայ մեծանան, չձուլուեն: Զուլումի առիթներ չտանք մեր երիտասարդներին: Մեր տանը միշտ դրուած է եղել, որ ընտանիքի լեզուն հայերէնն է: Դուռը բացէք եւ դուրս գաք, ձեր ցանկացած լեզուով կը խօսէք՝ անգլերէն, իտալերէն: Այդպիսով ես կարողացայ նաեւ զաւակներիս հայերէն սովորեցնել: Իհարկէ, այստեղ շաբաթօրեայ դպրոց ունէինք, որ մի քանի ժամով գործում էր, սակայն այն պաշտօնական դիրք չունի: Մի քանի կամաւորներ ուսուցանում են նոր եկած ընտանիքների երեխաներին: Վերջին 15 տարիներից երիտասարդ հայ ընտանիքներ են եկել, նրանց մի մասին գաղութը օգնել է հնարաւորութեան դէպքում աշխատանք գտնել: Կատարուել են նաեւ դրամական օգնութիւններ համալսարաններում սովորող ուսանողներին: Եթէ միութիւնն ինքը չի կարողանում օգնել, անհատների օգնութեանն են դիմում: Մի քանի տասնեակ հայ անհատներ օգնում են թէ եկեղեցուն, թէ ուսանողներին:

**- Իսկ համայնքն ինչքանո՞վ է կազմակերպւում:**

- Միլանի համայնքը մաքուր հայկական է: 1950-ականներից տարբեր կուսակցական ուղղութեան մարդիկ հաւքուեցին եւ

իրենց անկիւնը ստեղծեցին, հաշի չառան կուսակցականութիւնը եւ կարողացան համերաշխ համայնք ստեղծել: ՀՄԵՄ՝ հայ սկաւտական եւ մարզական միութիւն ստեղծուեց, որ մօտ 10 տարի գործեց եւ անդամները տեղափոխութեան պատճառով, այլեւս չշարունակուեց: Օճնիկ Փամպակեանի հիմնած մշակութային միութիւնը կար, որ նրա մահուանից յետոյ գրեթէ դադարել է գործել: Եկեղեցու հոգաբարձութիւնն է գործում, ՀԲԸՄ վարչութիւն կայ, որ սերտօրէն համագործակցում է Հայ տան վարչութեան հետ, եւ համերաշխօրէն բոլորը աշխատում են մէկ նպատակի համար՝ հայապահպանութեան: Նաեւ ակտիւ գործունէութիւն են տանում իտալացիների հետ:

Տարեկան մէկ կամ երկու ձեռնարկներ ենք անում: Հայ տան ատենապետուհին՝ տիկին Մարիա Մաւեանը, միշտ իտալացի հիւրեր է հրաւիրում, գրականագետներ, լրագրողներ, որպէսզի նաեւ իտալացիներին ծանօթացնի մեր մշակոյթին եւ պատմութեանը: Եկեղեցում նշում են եկեղեցական տօները, եւ գաղութը միշտ ներկայ է: Մեր հոգեւոր առաջնորդ հայր Առէնը, որ շատ մեծ փոփոխութիւն մտցրեց գաղութում եւ երիտասարդներին քաջալերեց, որ եկեղեցի գան, այժմ Վեհափառի կանչով յետ է գնացել Սուրբ Էջմիածին: Նա զարգացրեց մեր երգչախումբը եւ մօտ 6 տարում շատ գործեր արեց: Այժմ նոր վարդապետ է եկել, որի հետ դեռ չեմ հասցրել ծանօթանալ:

**- Իտալական կառավարութիւնը ինչպէ՞ս է վերաբերում հայերին: Հայերն ինչպէ՞ս են ինթեգրուած:**

- Ցաւօք, մենք՝ հայերս չենք կարողացել տեղական քաղաքական կեանքի մէջ մտնել: Սա ցաւալի է: Բայց ինչպէս ասացի, եթէ Ֆրանսայի պէս մեծ համայնք

քը չի կարողացել նման քայլերի դիմել, ի՞նչ պահանջեմք փոքրերից:

Դա նաեւ գալիս է մեր մեծերից: Երեւի մենք մեր երիտասարդներին չենք քաջալերել, որ քաղաքագիտութիւն սովորեն եւ մտնեն տեղական ինքնակառավարման մարմինների կամ քաղաքական կուսակցութիւններ: Երիտասարդներին, մեր զաւակներին քաջալերել ենք բժիշկ, ճարտարապետ, իրաւաբան կամ ճարտարագէտ դառնալ: Այն, ինչ քաղաքականութիւն չէ, հայերը կան: Բայց նաեւ պայմանները նշանակութիւն ունեն: Օրինակ, ես սիրիահայ եմ ծնունդով, մեր օրէնքները չեն թողել, որ մտնեմք տեղական քաղաքականութեան մէջ: Մեզ միշտ ասել են, զգոյշ եղէք, որեւէ կողմին մի պաշտպանէք, չգիտեմք յաջորդ օրը ով կը գայ իշխանութեան: Մենք հրեաների պէս դարերով կազմակերպուած չենք եղել:

Հիմա որ երրորդ սերունդն է գալիս, եւ ունի ֆրանսացի կամ հոլանտացի ընկերներ եւ կարող է մտնել քաղաքականութիւն:

**- Կա՞ն ծրագրեր, որ հայ համայնքն իրականացնում է Հայաստանի հետ:**

- Հայ համայնքը միշտ յատուկ վերաբերմունք է ունեցել Հայաստանի նկատմամբ: Հին սերնդից Ստեփան Սրափեանը, Հիւսուսեանը եւ նրա աղջիկը՝ տիկին Մարին, եւ շատ այլ անձինք թէ՛ Հայաստանում, թէ՛ Ս. Էջմիածնում մեծ գործեր են արել: Փոքր գաղութ է, բայց մեծ յարգանք կայ:

Մենք շատ բախտաւոր ենք, որ 1991 թուականից ազատ, անկախ Հայաստան ունեցանք: Դա մեր պատմութեան ամենակարեւոր հանգրուաններից է: Մեր երկիրը պէտք է Շուեցարիայի պէս լինի: Ես մաղթում եմ, որ ներկայ Հայաստանն ու Ղարաբաղը երկար դարեր պահենք:

Եթէ այս հողը բաց թողնենք, այլեւս պատմութեան մէջ չենք կարող մնալ: Այս հաւատքով ձեռքներս երկար պարզեմք բոլոր հայերին՝ յունահայ լինեն, թէ պարսկահայ, իրար մի տեղ տեսնենք՝ նոյն չափով յուզուենք եւ ուրախանանք:

Պէտք է, մեր ժողովուրդն իր աղքատութիւնից դուրս գայ: Հայաստանի ժողովուրդը մեղք է, պէտք է իր ապրելու վիճակը բարելաւուի, հիւանդանոցներն արդիականացնեն, աշխատատեղեր ստեղծուեն, կաշառութեանը վերջ դնեն: Մաղթենք, որ այն օրը գայ, որ մեր կառավարութեան անդամները ոչ թէ իրենց մասին մտածեն, այլ՝ մեր ազգի մասին: Այս է մաղթանքս ապագային:

Զրոյցը վարեց  
**ՅԱԿՈԲ ԱՍԱՏՐԵԱՆԸ**  
*«Օրեր»*



# Պետրոսի պատմութիւն (1)

## Խելացի Պետրոսը

Հեռաձայնը հնչեց անգամ մը, երկրորդ անգամ, երրորդ անգամ, չորրորդ անգամ, տասն անգամ, քսան եւ ասելի անգամներ։ – Աստուած իմ, այս որքան ուժգին կը հնչէ, անդադար, անդադար, կարծես որոտումի հարուածներ ըլլան, ականջս պիտի խուլնայ։ Ծարահատ, ձանձրացած հեռաձայնին այդ գոռոզ վարմունքէն, վերջապէս որոշեցի պատասխանել։

- Այօ, ո՞վ է (բարկացած)։
- Ինչո՞ւ չես պատասխաներ, ո՞ր աշխարհին վրայ կ’ապրիս։
- Նոյն աշխարհին վրայ որ դուն կ’ապրիս։ Գիտե՞ս, տակաւին վերի աշխարհը չ’ճամբորդեցի։
- Մի մտահոգուիր, այդ գործը իմ պարտականութիւնս է։
- Ինչո՞ւ, դուն ճամբորդութեան գրասենեակ ունիս, ըսէ տեսնեմ, «բասթօր» ներուն ալ հոգ կը տանի՞ս։
- Մենք «բասթօր» բնա՛ւ չենք գործածեր, այլ՝ անձին հոգիին ճամբորդելու որոշումով է։ պատասխանես։
- Կ’ուզեմ ինծի հեռաձայնողին համբերութիւնը փորձել...
- Բարեկա՛մ, եթէ խօսիլ չես ուզեր, պատասխանող մեքենայ մը գնէ, եւ անոր միջոցաւ խօսինք հետո։
- Ես չեմ ուզեր որ ուրիշը խօսի իմ տեղս, մանաւանդ հոգի եւ զգացում չունեցող մեքենայ մը։ Բայց ըսէ՛ ինծի թէ անունդ ի՞նչ է։
- Պետրոս։
- Ո՞ր Պետրոսը։
- Ինչո՞ւ, քանի՞ Պետրոս կը ճանչնաս։
- Օ՛հ, Ծա՛տ մը Պետրոսներ...
- Անունները ըսէ նայինք, տեսնենք։
- Առաջինը՝ վախկոտ Պետրոսը, որ ջուրէն կը վախճար ու կը սոսկար, (աւագանին մէջ խեղդուիլը միտքը կու գար)։
- Հապա երկրորդը՝ խուլ Պետրոսը որ միայն

ու միայն իր ուզածը կը լսէր։

Երրորդը՝ ոսկոր Պետրոսը որ վրան բնա՛ւ միս չկար։ Աստուած իմ, երբ մտաբերեմ, «Հալոուինի» կմախքի մը երեւոյթը ունէր։

Չորրորդը՝ ծոյլ Պետրոսը, որ կարդալու «ալերժի» ունէր։ Կ’ըսէր որ երբ կարդայ, բոլոր մարմինը քերուրտութեամբ կ’ունենար։ (Չեմ ալ գիտեր եթէ ճիշդ էր)։

Հինգերորդը՝ կարմիր Պետրոսը, տարին գոնէ քանի մը անգամ սեւ կը ներկէր իր կարմիր մազերը, բայց կարմիրը շուտով վրայ կը հասներ... (ան ալ շատ դժբախտ էր)։

Հիմա ըսէ՛ ինծի, այս բոլորէն ո՞ր մէկն ես դուն։

- Ո՛չ մէկը, բարեկամս, ո՛չ մէկը, բայց ինչո՞ւ կ’ուզես գիտնալ անպայման։
- Հա՛, կը հասկնամ, դուն ասելի բարձր դասակարգի Պետրոս մըն ես... դո՛ւն Մեծն Պետրոսը ըլլալու ես, «Զերդ վսեմութիւնը»։
- Կատակի ժամանակ չ’ունիմ, ինծի մտիկ ըրէ, ըսէ նայիմ, դուն՝ խելացի, ուշիմ, աշխատասէր Պետրոս մը չե՞ս ճանչնար։
- Այո՛, այո՛, շատ խելացի, աշխատասէր եւ շնորհալի Պետրոս կը ճանչնայի, բայց չուզեցի ըսել. բայց գիտե՞ս ինչո՞ւ չ’ուզեցի ըսել... որովհետեւ այդ խեղճը յիմարացաւ, մէկ խօսքով՝ խենթացաւ եւ անունն ալ խելացի Պետրոսէն խենթ Պետրոսի փոխուեցաւ. վախճամ դուն այդ Պետրոսը ըլլաս։
- Ո՛չ, ո՛չ, ո՛չ, բնա՛ւ եւ երբե՛ք...
- Բայց չ’ըսիր թէ ինչո՞ւ հեռաձայնեցիր։
- Ես Սուրբ Պետրոսն եմ. կ’ուզեմ հասկնալ թէ ե՞րբ քեզի կրնամ հիւրասիրել Տիրոջը տունը։
- Օ՛հ, դուն Սուրբ Պետրոսն ես... կեցի՛ր, այո՛, ձայնէդ արդէն ճանչցայ։
- Դուն խելացի Պետ... Սուրբ Պետրոսն ես։
- Ե՛րբ քեզի պիտի հիւրասիրեմ։
- Կամաց–կամաց, մի՛ աճապարեք Պետրոս. ես վաթսունըհինգ երկար տարիներ չա-

րաշար աշխատեցայ, չե՞ս կարծեր որ անոր չափ ալ հանգստանալու եւ կեանքը վայելելու եմ։ Աւելի լաւ կ’ըլլայ որ դուն ես երթաս եւ քիչ մը հանգստանաս։ Իսկ երբ ժամանակը գալու ըլլայ՝ դո՛ւն պիտի ըլլաս առաջինը, որ ինծի առաջնորդես եւ հիւրասիրես Տիրոջը տունը։

- Իսկ քու անունդ ի՞նչ է։
- Կը յիշե՞ս Գալուստեան Ազգային վարժարանին երկրորդ դասարանին, ամենավերջին կարգին վրայ ո՞վ էր քովդ նստողը...
- Հա՛, հա՛, յիշեցի՛, քաջ ոսկորը,– քաջ ոսկոր Պետրոսը... օ՛հ, դո՛ւն ես։
- Այո՛, այդ դասարանին մէջ եօթը Պետրոսներ կային։ Չմոռնամ ըսելու որ՝ դասարանին ամենափայլուն եւ ամենայետին աշակերտները Պետրոս կը կոչուին։
- Ուրեմն կեցցէ՛ Պետրոս Մամիկոնեանը։
- Ո՛չ, ո՛չ, Պետրոս՝ Վարդան Մամիկոնեանը... վնաս չունի, Վարդանին բանակին մէջ ալ Պետրոսներ կային, Մամիկոնեանի հաւատքով եւ ուժով։
- Անոնք իրենց ճակատագրով ապրեցան։
- Ծակատագի՛ր, հա՛, ճակատագիրը հեթանոսական իմաստ ունեցող բառէն կու գայ։ Հա՛, ասելին՝ արդիական հայերէնով «կեանքի գիր» կամ «կեանքի գիծ» պէտք է որ ըսուի։
- Լաւ, մտիկ ըրէ։ Բախտը ճիւղամաս մըն է դիպուածէն։ Բախտի մը տրամադրութիւնը եւ փոփոխութիւնները միաւորուելով անձի մը կամքին, կը ստեղծուի վերոյիշեալ անձին «կեանքի գիծը»։
- Կեանքին գիծը (ճակատագիրը) բախտէն ստեղծուած կամ բաղկացած չէ։
- Ան յառաջ բերուած է եւ կամ ստեղծուած է գրեթէ ամբողջութեամբ կամ մեծ մասամբ անձին կամքէն։
- Ապրի՛ս, այս ի՛նչ իմաստուն խօսքեր են, ո՞վ սորվեցուց քեզի այս իմաստութիւնը...
- Չմոռնա՛ս, որ ես ամենախելացի Պետրոսն եմ եւ իմաստութիւնս ստացած եմ Ամենայն Տիրոջմէ։ Արդեօք ե՛րբ կրնամ քեզի հիւրասիրել։
- Այո Պետրոս, այդ հարցումիդ... այդ հարցումիդ միմիայն Ամենայն Տէրը կրնայ պատասխանել...

**ՍԱՐԳԻՍ ԷՔԻԶԵԱՆ**  
Մոնթրէալ

## Խաչքարի օծում՝...

Շար. էջ 11-էն

պէտք է իմանայ, որ մենք չենք լռելու, մենք պահանջելու ենք, որ ճանաչի հայ ժողովրդի եւ մարդկութեան դէմ գործած իր աննախադէպ ոճրագործութիւնը, փոխհատուցի եւ հետեւանքները վերացնի»։

Խաչքարի տեղադրման օժանդակելուն եւ հայապահպանութեան գործին մէջ ունեցած աւանդի համար ՀՀ սփիւռքի նախարարութեան պատուոգիրներով ու շնորհակալագիրներով պարգեւատրուեցան Անտրէ Վալտան, Անթուան Պաղոտիկեան, Լիտիա Կայմակեան, Դանիէլ Արթիւնեան, Երւանդ Պերպերեան եւ Ֆրետերիք Ֆրիւքեան։

Նախարարը այցելեց քաղաքի թանգարանին մէջ բացուած «Լուսինեանները եւ Հայաստանը» ցուցահանդեսը, ուր ներկայացուած էր Լուսինեան թագաւորական տոհմի ամբողջ պատմութիւնը։ Սփիւռքի նախարարը եղաւ նաեւ Ֆրանսայի ազատագրման համար մարտընչած հայ ռազմիկներուն նուիրուած ցուցահանդեսին։

Այնուհետեւ տեղի ունեցաւ Լեւոն Վ-ին նուիրուած համա-

ժողով, ուր Զլոտ Մուրաֆեան հանդէս եկաւ «Լուսինեանները եւ Հայաստանը 13-14րդ դարերուն» թեմայով զեկուցումով՝ հանգամանալից ներկայացնելով Կիլիկեան Հայաստանի պատմութիւնը։ Համաժողովին ելոյթ ունեցաւ նաեւ Հրանդ Յակոբեան եւ բանախօսին պարգեւատրեց ՀՀ սփիւռքի նախարարութեան «Մայրենիի Դեսպան» մետալով՝ Հայագիտութեան ոլորտին մէջ իր բերած նպաստին, Հայոց լեզուի ու պատմութեան հանրահրուշակման ու հայապահպանութեան գործին մէջ ունեցած մեծ աւանդի համար։

Նոյն օրը երեկոյեան տեղի ունեցաւ հանդիսաւոր ընդունելութիւն Լուսինեանի քաղաքապետ Ռենէ Ժիբոյի անունէն, որուն ներկայ էին շուրջ 250 հայեր։ Ազգային եւ ժողովրդական պարերու կատարումներով հանդէս եկաւ Փուատիէ քաղաքի հայկական պարախումբը։ Նախարարը շնորհակալութիւն յայտնեց Լուսինեանի քաղաքապետին քաղաքի կեդրոնին մէջ հիմնալի տարածքի տրամադրման ու օժանդակութեան համար եւ բարձր գնահատելով անոր հայանպաստ գործունեութիւնը՝ պարգեւատրեց ՀՀ սփիւռքի նախարարութեան Ոսկէ մե-

տալով։ Հ. Յակոբեան նաեւ առաջարկեց Լուսինեան քաղաքը քոյրացնել Հայաստանի որեւէ քաղաքի հետ, որ քաղաքապետը ընդունեց մեծ ոգեւորութեամբ։

Կիրակի առաւօտեան նախարար Յակոբեան եւ դեսպան Չիթեչեան այցելեցին քաղաքի Մայր տաճար, որ կառուցուած է 1024թ-ին Լուսինեան տոհմին կողմէ, ուր հայերէն եւ ֆրանսերէն լեզուներով մատուցւեցաւ սուրբ պատարագ եւ կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ՝ ի յիշատակ Հայոց Յեղասպանութեան զոհերուն, Ֆրանսայի ազատագրման համար ինկած ռազմիկներուն, Արցախի հերոսամարտի ժամանակ զոհուածներուն։

Նախարարը հանդիպումներ ունեցաւ Թուլուզի, Պորտոյի, Փարիզի, Փուատիէի, ինչպէս նաեւ Հոլանտայէն ժամանած հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ. քննարկուեցան համայնքներուն մէջ կատարւած աշխատանքները, ձեռքբերումները եւ ապագայ ընելիքները, բարձրացուեցան նաեւ լուծում պահանջող շարք մը հարցեր, որոնց լուծման համար նախարարը պատրաստակամութիւն յայտնեց օժանդակութիւն կազմակերպել։

## Գ. Ծառուկեան բացումը կատարած է իր պանդոկին



«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախագահ Գագիկ Ծառուկեան, վարչապետին եւ Տնտեսութեան նախարարին ներկայութեան Դեկտեմբեր 20-ին, Երեւանի մէջ բացումը կատարած է իր հսկայ նորակառոյց պանդոկին, որ կը կոչուի «Multi Grand»: Կ’ըսուի, թէ Ծառուկեան ասելի քան 300 միլիոն տոլարի ներդրում կատարած է այս ծրագրին մէջ։



**Desjardins**  
Caisse de Chomedey

**Hrair Ketchedian, B.A. Écon.**  
Directeur Général  
Représentant en épargne collective pour Desjardins  
Cabinet de services financiers inc.

**450 688-0900, poste 215**  
Télécopieur : 450 688-1704

Siège social  
3075, boul. Cartier Ouest, Laval (Québec) H7V 1J4  
desjardins.com/caissedechomedey





Պոլսահայ Մշակութային Միության Կազմակերպությամբ  
Եղեռնի Հարիւրամեակին Եւ Հրանդ Տինքի Մահուան  
Ութերորդ Տարելիցին Նուիրուած Բանախօսութիւն

## Պոլիսէն Յատկապէս Հրաւիրուած ՖԵԹՅԻՅԷ ՉԵԹԻՆ՝ի Կողմէ

(Հրանդ Տինքի Փաստաբան Եւ Եղեռնի  
Ազատած Հայ Մեծ Մօր Թոռնիկ)

Ցեղասպանութիւն, Մեծ Մայրիկ, Հրանդ Տինք  
Թուրքիոյ Մէջ Նոր Չարգացումներ Թեմաներով

16 Յունուար 2015, Ժամը 20:00՝ին

Հրանդ Տինք Սրահին Մէջ

Սիրալիր Հրաւեր Բոլոր Մոնրէալահայութեան

## «Լեւոն Հայրապետեան. կալանուած ազատութիւն» ֆիլմը 2 օրում ցուցադրուել է աշխարհի 9 քաղաքներում

Շարունակուում են օրեր առաջ  
հանրութեան ուշադրութեանը ներ-  
կայացուած «Լեւոն Հայրապետեան.  
կալանուած ազատութիւն» վաւե-  
րագրական ֆիլմի արտերկրեայ  
ցուցադրութիւնները: Դեկտեմբերի  
24-ից 26-ն այն ցուցադրուել է աշ-  
խարհի 9 քաղաքներում, որոնց  
թւում են՝ Լոնտոնը, Նիւ-Եորքը,  
Մատրիտը, Պեռլինը, Սանկտ-Փե-  
թերպուրկը, Միլանը, Վիեննան,  
Սթոքհոլմը եւ հռոչը: «Հայրենիք»  
հայրենակցական միութեան գրա-  
սենեակներում նախաձեռնուած  
ցուցադրութիւններին ներկայ են  
գտնուել սփիւռքահայ համայնքների  
ներկայացուցիչներ, հասարակա-  
կան, մշակութային եւ քաղաքական  
գործիչներ:

Յիշեցնենք, որ «Լեւոն Հայրա-  
պետեան. կալանուած ազատու-  
թիւն» ֆիլմում ներկայացուած է  
բարերարի կեանքը, անցած ուղին,  
Արցախեան հերոսամարտի ընթաց-  
քում մարտիկներին ոգեշնչելու  
նպատակով Գանձասարի վանքի  
վերականգնումը, ինչպէս նաեւ պա-



տերազմից յետոյ Լեւոնային Ղարա-  
բաղի զարգացման հարցում նրա  
ունեցած ներդրումը:

Ֆիլմն անդրադառնում է նաեւ  
այս տարի Հայրապետեանի դէմ  
յարուցուած քրեական գործին: Նրա  
նկատմամբ հետաքննութիւնը սկըս-  
ուել է Պաշկիրիայից Դաշնային  
Խորհրդի նախկին սենատոր Իկոր  
Իզմեստնի ցուցմունքներից յետոյ,  
որ ցմահ ազատազրկուած է մի  
շարք յանցագործութիւնների հա-  
մար: Նախկին սենատորը պատմել է,  
որ Հայրապետեանը 2009-ին կապ է  
ունեցել «Պաշնել» ընկերութեան  
բաժնետոմսերի վաճառքի հետ:

What Areas Of  
Study Are  
Included In The  
Curriculum?



Armenian  
Language,  
Heritage and  
Traditions



Theater-Drama



Armenian Dance



Music




Chess



Photography



AGBU Montreal  
Հ.Բ.Մ. Մոնրէալ



## HAYORTYATS OR

### What is Hayortyats Or?

- The AGBU HAYORTYATS OR, in partnership with parents and community members and organizations prepares the next generation of Canadian Armenians in preserving the Armenian language, history, culture and traditions, while focusing on character, knowledge and mutual respect.
- We offer the children of our community an embracing environment to discover their heritage, be proud of their ancestors and lay a strong foundation for the future of our community.

### Who May Enroll?

- Anyone ages 10-16 years.

### Cost?

- \$225 for the opening session (January 31 - May 9, 2015)  
Two sessions per year (September - December, January - May)

### When and Where Do Classes Take Place?

- Every Saturday from 9:30 am -2:00 pm at  
**AGBU Alex Manoogian School**  
755 rue Manoogian, Saint-Laurent, Québec H4N 1Z5

### Who May I Contact to Enroll My Child?

- For more information, please contact:  
**Silva Mangassarian 514 778-9479**  
**Emma Sargsyan 438 994-2634**  
**hayortyats@gmail.com**  
**www.hayortyats.ca**

**FREE for the newly arrived  
Syrian Armenian Students**

## Նուիրատուութիւններ

«Ապագայ» շաբաթաթերթի 39-րդ տարեդարձի առթիւ տիկին Մարո Մարգարեան, տիար Յակոբ Վարդիվառեան (ԱՄՆ) կը նուիրեն 100-ական տոլար:



**Komitas**  
SALON FUNÉRAIRE

ԹԱՂԱՆԱԿԱՆ ՄՊԱՄԱԿՈՒԹԻՒՆ

**Funéraille Traditionnel  
Monument  
Pré-arrangement**

5180, rue Salaberry  
Montréal, Québec H4J 1J3  
Tél. : 514 331-0400

[www.komitas.ca](http://www.komitas.ca)

## 1915-ի մասին նոր գիրք մը թրքերէնի թարգմանուած

«Իլթիշիմ» թրքական հրատարակչատունը վերջերս  
հրատարակեց Հայոց Ցեղասպանութեան մասին գրի  
առնուած նոր գիրքի մը թրքերէն թարգմանութիւնը, որ  
կը կոչուի «Թուրքիա ու Հայկական Ուրուականը –  
Քայլեր՝ ցեղասպանութեան հետքերուն վրայ»: Գիրքին  
գոյգ հեղինակներն են Ֆրանսական Ֆիկարօ թերթի աշ-  
խատակից Լոր Մարշան եւ Լը Մոնտ թերթի Թուրքիոյ  
թղթակից Կիյոմ Փիէր: Երկու հեղինակներու կողմէ գրի  
առնուած գիրքը կը քննարկէ 2004էն ասդին Թուրքիոյ  
Եւրոմիութեան անդամակցութեան բանակցութիւններ-  
ու մանրամասնութիւնները ու այս կարգին՝ տարբեր  
տեսանկիւնէ մը վկայութիւններ կը բերէ հայկական  
հարցին, այդ հարցը նկատելով ամենէն նուրբ խնդիր-  
ներէն մէկը:

Երկու Ֆրանսացի հեղինակները իրենց այս գրքին  
մէջ կը խօսին անունները փոխուած գիւղերու, այդ գիւ-  
ղերուն մէջ տուներն ու եկեղեցիները փլցուած, սպան-  
նուած, կամ սա կամ նա կերպով վերապրած մարդոց  
զաւակներուն ու թոռներուն պատմածներուն մասին եւ  
այս կերպով պաշտօնական պատմութեան դիմաց անկէ  
բոլորովին տարբեր պատմութիւն մը կը դնեն:

18 բաժիններէ բաղկացեալ գիրքին հեղինակները  
այստեղ ի մի բերած են Ֆրանսայի, Իսթանպուլի ու  
Անատոլիոյ զանազան քաղաքներուն մէջ իրենց հաւա-  
քած տեղեկութիւնները, նաեւ բերած են վկայութիւններ  
Հայոց Ցեղասպանութեան զոհերուն թոռներէն, խօսած  
են Սեւան Նշանեանի պատահարին մասին, Դարեվա-  
նի մասին որմէ շրջանաւարտ եղած է Հրանդ Տինք,

կամ Թիքթոյի միլիթաններուն մասին որոնք իրենց  
կազմակերպութիւնը հիմնած են 24 Ապրիլ 1972-ին:

Գիրքին թրքերէն թարգմանութիւնը կատարուած է  
Բենան Աքմանի կողմէ որ կը յայտնէ թէ այս թարգ-  
մանութիւնը կատարեց մօտաւորապէս վեց ամսուան  
աշխատանքով: Անոր կարծիքով այս գիրքը խորունկ  
ազդեցութիւն պիտի գործէ երիտասարդ Թուրքիացի-  
նրու վրայ եւ երիտասարդութիւնը ճամբայ պիտի հանէ  
դէպի ճշմարտութեան ցնցիչ ուղեւորութիւն մը: Աքման,  
որ խօսած է Տեմօքրաթ Հապեր կայքէջէն լրագրող  
Հրանդ Գասպարեանի հետ, յայտնած է որ հեղինակ-  
ները իրենց գրքին մէջ ունին վարպետօրէն գործած-  
ւած ու շատ սահուն ոճ մը: Թարգմանիչը ինքն ալ խո-  
րապէս ազդուած է Հայկական հարցի մասին իր այս-  
տեղ կարդացածներէն, ցնցիչ տպաւորութիւն կրած է  
Տերսիմի Հայերուն մասին պատմուածներէն, Մարսելի  
մէջ «Փոքրիկ Հայաստան» մը հիմնած այն Հայերէ  
որոնք ցեղասպանութեան վերապրողներ էին, այն  
այցելութիւններէն զորս Սփիւռքի մէջ ապրող Հայեր  
սկսած են տալ դէպի իրենց մայր հայրենիքը, նաեւ  
Հայերը փրկել ջանացող Օսմանեան պաշտօնատար-  
ներու պատմութիւններէն: Թարգմանիչը դիտել կուտայ  
որ այս գիրքը տխուր ուղեւորութեան մը պատմութիւնն է:

Գիրքին ծանօթացումը կատարուեցաւ Թաքսիմի  
Ֆրանսական հիւպատոսարանի մէջ սարքուած շնոր-  
հանդէսով մը որուն ներկայ գտնուեցաւ հեղինակ Լոր  
Մարշան:

«ՄԱՐՄԱՐԱ»



## **Ouverture de la nouvelle Pharmacie ARSLANIAN**

Vos pharmaciens Abel et Alex Arslanian vous accueilleront au 1500 Blv Henri-Bourassa Ouest, coin Bois-de-Boulogne.

Vos professionnels de la Santé seront là pour vous servir tous les jours du Lundi au Vendredi de 8h00 à 20h00 et le samedi de 8 h à 18h00

Prise de pression artérielle, saturation d'oxygène, glycémie, cholestérol, suivi du dossier pharmacologique, service de livraison.

Vous pouvez transférer vos prescriptions si vous le souhaitez.  
Bienvenue à notre clientèle fidèle.



**Pharmacie Abel-Claude ARSLANIAN**  
1500 blv Henri-Bourassa ouest  
Tel 514-303 3832



Affilié à UNIPRIX CLINIQUE

## **Բացում նոր Դեղարան ԱՐՍԼԱՆԵԱՆԻ**

Ձեր դեղագործները Աբել եւ Ալեքս Արսլանեան ձեզ կ'ընդունին իրենց նոր հասցեին վրայ 1500 Blv Henri-Bourassa Ouest, coin Bois-de-Boulogne.

Ձեր առողջապահական մասնագետները պատրաստ են ձեզի միշտ ծառայելու ամեն օր երկուշաբթին Ուրբաթ առաւօտեան ժամը 8:00էն մինչեւ երեկոյեան ժամը 8:00, իսկ Շաբաթ օրերը առաւօտեան ժամը 8:00էն մինչեւ երեկոյեան ժամը 6:00:

Կրնաք նաեւ քննել տալ ձեր ճնշումի մակարդակը, թթուածինի բաւարարուածութիւնը, շաքարախտի վիճակը, քոլեսթերոլը, ձեր դեղարանային թղթածրարի հետեւումը եւ դեղերու մինչեւ տուն սպասարկութիւնը:

Կրնաք նաեւ ձեր դեղերու թղթածրարները փոխանցել դեպի մեր դեղարանը ձեզի աւելի լաւ ծառայելու համար:  
Բարի եկած էք մեր մօտ իբր հաւատարիմ յաճախորդներ:



**Դեղարան Աբել - Գլօտ Արսլանեան**  
1500 blv Henri-Bourassa Ouest, Montréal, Qc  
Հեռ. 514 303-3832